

Երեսփոխան այսպես

ՄԱՅՐ ԱՌՈՈՒ ՄՈՒՐԲ ԷԶՄԻԼՅՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՉԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

29 նոյեմբերի

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում 2018 թ. ՀՀ պետական մրցանակի դափնեկիր Ջեյմս Թրուշարդին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում 2018 թ. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակին արժանացած «Նեյշնլ ինսթրումենթս» ընկերության համահիմնադիր եւ նախագահ ղրկտոր Ջեյմս Թրուշարդին։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր մասնավոր գնահատանքը հայտնեց «Նեյշնլ ինսթրումենթս» ընկերության նախագահին՝ Հայաստանում ՏՏ ոլորտի զարգացմանն ուղղված նախաձեռնությունների համար, որոնք երիտասարդությանը ընձեռում են նոր հնարավորություններ։

Ջրուցի ընթացքում անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու առաքելությանը հայ ժողովրդի կյանքում,



լավատեսության ոգին ու շարունակել իրենց ծառայությունը բերել հայրենիքին։

Նորին Սրբությունը տեղեկացրեց, որ Մայր Աթոռ Սուրբ Եջմիածինում այս ծրագիրը՝ իր օգտակարությունը բերելով մարտական գործողություններում վիրավորում ստացած զինվորներին։

Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր գնահատանքի խոսքն ուղղեց Վրթանես եպիսկոպոսին, ինչպես նաեւ համդիպմանը ներկա հնդկահայոց հոգեւոր հովիվ, ճեմարանի կա-

ռավարիչ Մովսէս վրդ. Սարգսյանին, Կալկաթայի Սուրբ Նազարէթ հայկական եկեղեցու վարչության փոխատենտապետեր Սունիլ Սթրէին եւ Սյուզան Ռուբենին։

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պահպանիչ աղոթքով օրհնեց զինվորականներին՝ հայցելով ամենակալ Տիրոջ հովանին հայրենիքի խաղաղության եւ հայոց զինվորների անվտանգ ծառայության համար։

Նորընծա վարդապետների



րին՝ տեղեկություններ փոխանցելով նաեւ պրն Թրուշարդի կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերի վերաբերյալ։

Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով Ջեյմս Թրուշարդին ՀՀ պետական մրցանակին արժանանալու առիթով, մարդեց նրան նորանոր ձեռքբերումներ եւ արդյունավետ գործունեություն՝ ի նպաստ մարդկության բարօր ու ապահով կյանքի կերտման։

մասնավորապես խոսվեց այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո գործող հանրակրթական դպրոցների եւ հայրույցայ տների գործունեության, ինչպես նաեւ Նախաձեռնվող նոր կրթական ծրագրերի մասին։

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը։

6 դեկտեմբերի

Բուժումից վերադարձած զինվորականների

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց հայրենիքի պաշտպանության համար ռազմական գործողությունների ժամանակ հաշմանդամություն ստացած երեք զինվորականներին, որոնք օրերս վերադարձել են Հնդկաստանից՝ ավարտելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Կալկաթայի Սուրբ Նազարէթ հայկական եկեղեցու վարչության նախաձեռնությամբ ու աջակցությամբ՝ վերջույթների պրոթեզավորման հետ առնչված բուժումը։

Երկու տարի առաջ մեկնարկած այս ծրագրի շրջանակներում սա Հնդկաստանում բուժում ստացած զինվորականների չորրորդ խումբն է։ Հանդիպմանը ՀՀ ՁՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Արքայապետը Վեհափառ Հայրապետին տեղեկացրեց զինվորականների բուժման ընթացքի մասին։ Իրենց հերթին զինվորականները խորին շնորհակալություն հայտնեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ իրենց բուժումը Հնդկաստանում կազմակերպելու

համար՝ ընդգծելով, որ իրենց առավել ուժ եւ զորություն է հաղորդում այն իրողությունը, որ Հայոց եկեղեցին մշտապես հայ զինվորականի կողքին է՝ իր օրհնությամբ եւ աջակցությամբ։ Նրանք մասնավոր գոհունակությամբ փաստեցին նաեւ բուժման ընթացքում Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանում եկեղեցական վարչության, տեսչության եւ աշակերտության կողմից իրենց նկատմամբ դրսևորված հյուրընկալության եւ ընտանեկան ջերմ մթնոլորտի մասին։

Այնուհետեւ հայրենյաց պաշտպաններին իր օրհնությունը բերեց Նորին Սրբություն Գաբրիել Բ Կաթողիկոսը՝ հետաքրքրվելով նրանց առողջական վիճակով, բուժման արդյունավետությամբ եւ Հնդկաստանում կեցության պայմաններով։ Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ արձանագրեց, որ հայ զինվորականներն այս ծրագրի արդյունքում կարողանում են վերագտնել իրենց հույսի եւ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց եւ իր օրհնությունը բաշխեց Մայր Աթոռի միաբաններ Անդրանիկ վրդ. Գեորգյանին եւ հնդկահայոց հոգեւոր հովիվ, Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Մովսէս վրդ. Սարգսյանին։

Դեկտեմբերի 3-ին պաշտպանելով իրենց վարդապետական թեզերը՝ վերջիններս դեկտեմբերի 6-ի առաքվոյան Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Նաթան արք. Հովհաննիսյանի, արժանացան մասնավոր վարդապետության աստիճանի տվչության։

Հանդիպման սկզբում Նաթան արքեպիսկոպոսը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց նորընծա վարդապետներին՝ հույս հայտնելով, որ եկեղեցու հոգեւոր դասը պիտի սովորաւան նորանոր երիտասարդ վարդապետներով։

Այնուհետեւ իր հայրական օրհնությունն ու պատգամը վարդապետներին փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ իր ուրախությունն

արտահայտելով պաշտպանության եւ վարդապետական աստիճանի տվչության առիթով։

Վեհափառ Հայրապետը մենապես կարեւորեց վարդապետների առաքելությունը՝ եկեղեցու։ Ավետարանի ոգով եւ հայրերի ավանդության համաձայն հավատացյալների կրթության եւ դաստիարակության գործում։


Խոսելով վարդապետների հոգեւոր հետազապաւարդության մասին՝ Նորին Սրբությունը մարդեց, որ տվչության ժամանակ ստացված շնորհներն իրենց պատուները տան՝ օրհնություն դառնալով մեր ժողովրդի համար։

Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը հայտնեց վարդապետական թեզերի քննիչ հանձնախմբի անդամներին եւ վարդապետական աստիճանի տվչությունը կատարած Նաթան արքեպիսկոպոսին։ Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պահպանիչ աղոթքով օրհնեց Անդրանիկ եւ Մովսէս վարդապետներին եւ նրանց ընծայեց վարդապետական լաւջախաշեր։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը քվեարկեց Էջմիածնի 14/11 ընտրական տեղամասում

Դեկտեմբերի 9-ի առավոտյան Ն. Ս. Օ. Ս. Տ. Ֆարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Էջմիածնի քաղաքի 14/11 ընտրական տեղամաս, ուր մասնակցեց ՀՀ խորհրդարանական ընտրությունների քվեարկությանը:

Քվեարկությունից հետո լրագրողների հետ զրույցում Նորին Արքեպիսկոպոսը մասնավորապես ասաց. «Աղոթքով քվեարկեցինք մեր երկրի կայունության, խաղաղության եւ առաջընթացի համար, որպեսզի մեր ժողովուրդն ապրի ապահով, անվտանգ ու բարձր կյանքով, փրկվի եւ միաբանության մեջ: Թող Աստված օրինի մեր երկիրը եւ աշխարհափյուռ ազգս հայոց»:



«Կաասպից Արեւմուտքում խաղաղության հաստատման հիմքերն ու ռեսուրսները» խորագրով միջազգային համաժողովը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Նոյեմբերի 29-ին, Ն. Ս. Օ. Ս. Տ. Ֆարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Ֆարեգին Ա» կրթական կենտրոնում իր աշխատանքն սկսեց «Կաասպից Արեւմուտքում խաղաղության հաստատման հիմքերն ու ռեսուրսները» խորագրով միջազգային համաժողովը՝ նվիրված Գանձակի 1988-1989 թթ. ինքնապաշտպանությանը, Գարդմանքի եւ Գանձակի հայաթափման 30-րդ տարելիցին, Գարդմանքում, Գանձակում, Նախիջևանում, Սումգայիթում, Բաքվում եւ Մարաղայում 1987-1992 թթ. ցեղասպանության զոհերի, անհայտ կորածների հիշատակին:

Մայր Աթոռի հովանավորությամբ անցկացվող համաժողովը կազմակերպվել էր Աղոթեցանական խՆՅ-ից փախստականների համագումարի, ԵՊՀ-ի արեւելագիտության ֆակուլտետի իրաճագիտության սովորողի, «Համշէնուխ» համշէնագիտական միջազգային միության եւ Աղոթեցանական խՆՅ-ի հայերի միավորման ջանքերով:

Համաժողովն սկսվեց Տերունական

Անդրադառնալով երեք տասնամյակ առաջ Գանձակում, Գարդմանքում, Նախիջևանում, Սումգայիթում, այնուհետեւ Բաքվում եւ Մարաղայում հայության հանդեպ կիրառված բռնություններին ու ջարդերին, որոնց հետեւանքով հայաթափվեցին հայկական շատ ու շատ բնակավայրեր՝ սրբազան հայրը նշեց. «Մենք հավաքվել ենք այսօր Մախնառաջ հիշելու բոլոր այն ամենը զոհերին, որոնք սահատակվեցին երեսուն տարի առաջ: Մենք եկել ենք այստեղ խաղաղության եւ մարդասիրության մղումներով: Վստահ եմ, որ ամենքն էլ իրենց կյանքի մեջ կուզեն ինչ-որ բան անել՝ որնէ տեղ աշխարհում կանխարգելելու նման հանցագործությունները»:

Նաթան սրբազանը խոսեց նաեւ ինքնապաշտպանության մասնակցած հայ եկեղեցականների մասին: «Հայ եկեղեցականը միշտ էլ եղել է իր հոտի քաջ հովիվը, հատկապես դժվարին ժամանակներում եւ օրորում... Այս եղել է մեր եկեղեցու առաքելությունը, այս մնում է մեր եկեղեցու առաքելությունը եւ այսպես պիտի լինի շարունակ»,- եզրափակեց սրբազանը:

Ներկայությունը ողջույնի խոսք ուղղեց նաեւ



աղոթքով, որից հետո համաժողովի մասնակիցներին ողջունեց Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Սրբազան հայրը ներկայներին փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը ու բարենաղթանքները:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Ս. Տ. Ֆարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրնությամբ մատարվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների ընդ նշանակումները:

- Ավարտած նկատելով Թովմա վրդ. հաջատյայնի ծառայությունները Արեւմտյան եվրոպայի հայրապետական պատվիրակությունում՝ հայր սուրբը նշանակվել է Հայ եկեղեցու համաշխարհային երիտասարդաց միության (ՀԵԴՄ) հոգեւոր տեսուչ եւ կենտրոնական գրասենյակի տնօրեն:
- Սիփան վրդ. Գեորգյանի ծառայու-

թյունն ավարտած համարելով Արեւմտյան եվրոպայի հայրապետական պատվիրակությունում՝ ծառայության է նշանակվել Վանորենի տեսչությունում՝ Վանորենի տեսչի իշխանության ներքո:

- Բաբկեն վրդ. Սալբիյանը, ազատվելով Վանորենի տեսչությունում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:
- Գեղարդ արք. Հովհաննիսյանը, ազատվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանատանց ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Արցախի թեմում:

Շարունակությունը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորագիրը Վրաստանի նորընտիր նախագահին

Նոյեմբերի 30-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Ֆարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորագիր է հղել Սալոմե Չուրաբիշվիլին՝ Վրաստանի նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ: Վեհափառ Հայրապետի գրույթյան մեջ մասնավորապես ասված է. «Վրաստանի ժողովուրդը հայրենի իր երկրի կառավարումը վստահել է Ձեզ՝ գնահատելով Ձեր հարուստ փորձառությունը եւ տարբեր պաշտոններում Վրաստանի գործացմանն ուղղված հայրենամեր Ձեր ջանքերը:

Մեր մտաբանքն է, որ Ձեր առաջնորդությամբ նոր ձեռքբերումներով արդյունավորվեն Վրաստանի եւ Հայաստանի բարդորացիական հարաբերությունները՝ ի նպաստ մեր եղբայր ժողովուրդների բարօրության եւ դարավոր բարեկամության ամրապնդման:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մտաբանել է, որ երկնավոր Տերն իր ամենախնամվելի հովանու ներքո պահի Վրաստանը եւ նրա հավաքավոր ժողովրդին՝ պարգևելով նորանոր հաջողություններ նորընտիր նախագահին:

Ն. Ս. Օ. Ս. Տ. Ֆարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների առիթով

Հայրենի մեր երկրում տարվույս դեկտեմբերի 9-ին տեղի ունեցան ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ՝ դառնալով կարևոր հանգրվան Հայաստանում վերջին ամիսներին ընթացող ներքաղաքական զարգացումների:

Մեր օրհնությունն ենք բերում սիրելյալ մեր ժողովրդին, ինչպես եւ կուսակցություններին, որ ապագայի հանդեպ պատասխանատվության գիտակցումով մասնակցություն բերեցին խորհրդարանական ընտրություններին: Մեր շնորհավորանքներն ու բարենաղթանքներն ենք հղում «Իմ քայլը» դաշինքին, «Բարգավաճ Հայաստան» եւ «Լուսավոր Հայաստան» կուսակցություններին, որոնք պարսպանք մեր ժողովրդի վստահությանը՝ պատասխանատվություն ստանձնելով մեր երկրի ապագայի համար: Աղոթում ենք, որ Տերը հաջողություններ պարգևի նորընտիր խորհրդարանի աշխատանքներին՝ համուն մեր հայրենիքի առավել զորացման եւ բարձր ապագայի կերտման:

Մաքեթական մեծ Ս. Ավետեցին, ինչպես միշտ, իր ջանքերով է բերելու ի խնդիր մեր պետականության ամրապնդման, ազգային համեղաշխույթյան զորացման եւ ներքին ու արտաքին մարտահրավերների հաղթահարման:

Տիրոջ շնորհը, սերը եւ ողորմությունը թող լինեն մեր ժողովրդի հետ՝ ի Հայաստան եւ ի Սփյուռք՝ այժմ եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:

Վարդապետական թեզերի պաշտպանություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում



Դեկտեմբերի 3-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Ֆարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում տեղի ունեցավ վարդապետական թեզերի բանավոր պաշտպանություն:

Մասնավոր վարդապետության աստիճանի համար թեզ պաշտպանեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երկու միաբան: Հվեղիայի հոգեւոր հովիվ Անդրանիկ արք. Գեորգյանը պաշտպանության էր ներկայացրել «Դ դարի երրորդութեանը անհանգստացումը եւ Հայ եկեղեցին (ըստ վաղ հայրաբանական եւ դավանաբանական գրականության)» թեմայով թեզը, իսկ հինգևհայոց հոգեւոր հովիվ եւ Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Մովսես արք. Սարգսյանը՝ «Վերադարձի պատերազմի տեսությունը» թեմայով թեզը:

Քննող հանձնաժողովի կազմում ընդգրկված էին Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստամյանը (նախագահ), Հիրակի թեմի առաջնորդ Սիբայել եպս

Աջապահյանը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան, Երեւանի Ս. Գրիգոր Առաքելիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Մուշակյան եպս ժամկուշյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Սյրտիչ եպս Պողոսյանը եւ Վեդուր եպս Սարգսյանը:

Անդրանիկ արքայի թեզի ընդդիմախոսն էր փ. գ. ք., դոցենտ Պարգե Բարսեղյանը: Հայր Աթոռի թեզի վերաբերյալ ընդդիմախոսական ճառով հանդես եկավ փ. գ. դ. Հակոբ Քեոսեյանը:

Անդրանիկ արք. Գեորգյանը եւ Մովսես արք. Սարգսյանը իրենց հերթին ներկայացրին թեզերը, պատասխանեցին հանձնաժողովի անդամների եւ ներկայների հարցերին, լուսաբանություններ տվեցին ընդդիմախոսների դիտարկումների առնչությամբ:


Պաշտպանության ավարտին հանձնախմբի անդամները դրական եզրակացություն տվեցին կատարված աշխատանքների վերաբերյալ՝ արժանի նկատելով արեւմտեան մասնավոր վարդապետության աստիճանի տեղադրումը:

Մեկնարկեց սոցիալական նոր ծրագիր՝ 1988 թ. երկրաշարժի 30-րդ տարելիցի առիթով

Ն. Ս. Օ. Ս. Տ. Ֆարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իր աշխարհափյուռ թեմերով նախաձեռնել է 1988 թ. երկրաշարժի հետեւանքով տուժած եւ առ այսօր տնակներ չունեցող ընտանիքներին բնակարան-

ներով ապահովելու սոցիալական ծրագիր: Նպատակ ունենալով գորակցել սոցիալական ծանր պայմաններում բնակվող ընտանիքներին՝ առաջիկա ամսում, ծրագրի առաջին փուլում, Հայոց եկեղեցու կողմից կոմիտայի տարբեր բնակարան՝ յոթը՝ Գյումրի քաղաքում, Երեւոյ՝ Սպիտակում:

Հայոց առաջին լուսավորիչների տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



պով բյուրեղացիներ մեր ինքնությունը եւ բոլոր ժամանակների հոսանքների ու մարտահրավերների խառնարանում մնացին անփոփոխելի, ամրոտականելի եւ ամհաղթախարելի։

Ահա այդ տեսիլքն է, որ երեւ, այսօր եւ ցկատարած աշխարհի՝ որպէս իր առաքելություն, ծավալում է Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին. նահատակ, բայց միշտ հարուցյալ եկեղեցին, հալածյալ, բայց ընդմիշտ հաղթական եկեղեցին. կորցրած, բայց միշտ լիառատ եկեղեցին։ Ուստի հայ իրականության մեջ չկա եւ չի կարող լինել այլ թխնոր. այդ մեկն ու միայն Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին է։ Հայի եւ Հայաստանի ճշմարիտ լուսավորության, միասնության, զորության, շենության եւ անմահության այդ թխնորն այլեւ երբեք ոչ ոք եւ ոչինչ չեն կարող հեռացնել, զատել իր հարազատ զանգվածից։

Այս է մեր հավատամքը, այս է մեր առաքելությունը որպէս հայ հոգեւոր սպասավորներ եւ որպէս Աստուծոյ արքայության ժառանգորդ հայ ժողովուրդ։



Դեկտեմբերի 1-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնախմբեց հայոց առաջին լուսավորիչներ Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմէոս առաքելների տոնը։ Առաքելների տոնը Ն. Ս. Ս. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով դեռեա 2015 թվականին հռչակվել է Աստվածամուկ ս. Գեղարդի ուխտի օր։ Այդ օրը հավատացեցող օրհնության համար դուրս է բերվում Մայր Աթոռում պահվող համաքրիստոնեական սրբությունը։

Բերկրառատ տոնի առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ս. Դովհաննէս Մկրտիչ եւ Ս. Վարդան մատուռ-մկրտարանում, հանդիսապետությամբ Ն. Ս. Ս. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Պատարագ։ Պատարագից եր Մայր Աթոռի բանգարանում եւ արխիվի տնօրէն Աստղիկ քին. Կարապետյանը։

Ս. Պատարագի արարողությանը ներկա էին Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսներ, միաբաններ, տարբեր բեմերից ժամանած ուխտավորներ։

Պատարագի ընթացքում եկեղեցական հանդիսավոր բաժնորդ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, ինչ Կեհարանից մատուռ-մկրտարան բերեց աստվածամուկ ս. Գեղարդը։ Նորին Սրբությունը, օրհնելով ներկա ժողովուրդին, հնարավորություն ընձեռեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ուխտավորաբար ժամանած հավատացյալներին երկպագելու եւ համընդուն համաքրիստոնեական սրբությունը։

Սրբազան արարողության ընթացքում տեղ հայրն անդադարձ կատարեց տոնի խորհրդին՝ ի մասնավորի մշտելով. «Առաքելական բարոգչությանը Հայոց աշխարհում եւ հայ ժողովրդի մեջ դրվեց Աստուծոյ արքայության թխնորը, որը սքանչելիացա խմորեց եւ բարձրացեց հայոց ազգը բարոյական իդեալների գագաթը՝ դարձնելով Նոր Ուխտի ընտրյալ եւ համիտեանական ազգ։

Լուսավորիչ առաքելներն իրենց կենարար ու փրկարար տեսիլքով այնպէս կերտեցին հայ ժողովուրդին, որ Աստուծոյ արքայության թխնորից առաջ եկած լուսեղեն սերունդներն իրենց վարքով, մտքի ու ձեռքի արարումներով, կենսակերպով բյուրեղացիներ մեր ինքնությունը եւ բոլոր ժամանակների հոսանքների ու մարտահրավերների խառնարանում մնացին անփոփոխելի, ամրոտականելի եւ ամհաղթախարելի։

Աստղիկ քին. Կարապետյանը։

Ս. Պատարագի արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ուխտավորաբար ժամանած հավատացյալներին երկպագելու եւ համընդուն համաքրիստոնեական սրբությունը։

Ս. Պատարագի արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ուխտավորաբար ժամանած հավատացյալներին երկպագելու եւ համընդուն համաքրիստոնեական սրբությունը։

Ս. Պատարագի արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ուխտավորաբար ժամանած հավատացյալներին երկպագելու եւ համընդուն համաքրիստոնեական սրբությունը։

Ս. Պատարագի արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ուխտավորաբար ժամանած հավատացյալներին երկպագելու եւ համընդուն համաքրիստոնեական սրբությունը։

Ս. Պատարագի արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ուխտավորաբար ժամանած հավատացյալներին երկպագելու եւ համընդուն համաքրիստոնեական սրբությունը։

Ս. Պատարագի արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ուխտավորաբար ժամանած հավատացյալներին երկպագելու եւ համընդուն համաքրիստոնեական սրբությունը։

Ս. Պատարագի արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ուխտավորաբար ժամանած հավատացյալներին երկպագելու եւ համընդուն համաքրիստոնեական սրբությունը։

Ս. Պատարագի արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ուխտավորաբար ժամանած հավատացյալներին երկպագելու եւ համընդուն համաքրիստոնեական սրբությունը։

Ս. Պատարագի արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ուխտավորաբար ժամանած հավատացյալներին երկպագելու եւ համընդուն համաքրիստոնեական սրբությունը։

կայանք մեկընդմիշտ դարձնել աղբյուր մերշնչանքի՝ դեպի դարերի անհուն ապագա ձգվող սերունդների համար։ Ինչպէս հայտնի մի հեղինակ է ասում. «Դու կամ առաքյալ ես, կամ լոկ դաշտ առաքելության։ ...Դու կամ Աստուծոյ փնտրող ես, կամ մեկը, որին Աստված է փնտրում»։ Սեր առաջին լուսավորիչների առաքելագործության մեծ ավանդը հայոց աշխարհում ծնեց բյուրավոր նմիրյալների՝ հայապետների, եպիսկոպոսների, վարդապետների, երեցների, սարկավագների ու աշխարհականների, որոնց համար խաչի խորհրդի առջեւ զուտ կանգնեցին ու հիմնադր կամ այդ խորհրդի մասին հավելտ խոսեց թեղի էին ու թերեւ ոչ պիտանի։ Նրանց համար հանուն Քրիստոսի կենարար խոսքի ֆիզիկական ու հոգեւոր մահատակություն կրելը դարձավ խաչի զինվորագրման փաստագիր։ Համաձայն սրա՝ նրանց կյանքի մեծագույն առաքելությունը դարձավ

խաչի փնտրությունը, որի խորհրդին փարված՝ նրանք գտան Աստուծոյ։ Նրանցից ոմանք Աստուծոյ փնտրելու ճանապարհին գտան Սուրբ Էջմիածնի ու խոնարհվեցին իրենց ճակատագրի առջեւ՝ հավելելով, որ ճեմարանականների համար առաքելների հիշատակության այս օրը խորհրդանշական է, քանի որ դեպի փրկության քարոզչություն իրենց դեռեա չիրականացրած ու ապագայում իրականացնելիք ծառայության այս ճամփորդության մեջ նրանք տեսնում են երբեմն թույլ ու ընկերային կյանքի զանազան շերտերը ներկայացնող անհատների, որոնք Տիրոջ մէկ կանչով պարզ անհատների փոխվում ու դառնում են մարդկության պատմության ընթացքը փոխող հերոսներ։ Այստեղ դիպվում ու այլ հավաստագրերը դառնում են լոկ պայմանականություն։ Այստեղ կարեւորվում է հոգու կերտումը՝ զերծ սեփական անընկրցելու վախից, հանուն եկեղեցու սուրբ տեսչականի իրագործման, հանուն Աստուծոյ ներկայության հաստատման։

Վերջում հայր սուրբը, տոնի առիթով շնորհավորելով ամենքին, մաղթեց լինել խաչի զինվոր եւ մշտապէս փնտրել Աստուծոյ։

Ապա ցուցադրվեց «Սուրբ Գեղարդ. Չեն կենաց» փաստավաւերագրական ֆիլմը (ռեժիսոր՝ Դանա Մովսիսյան, սցենարիստ՝ Լեւոն Գալստյան)։

Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմէոս առաքելների՝ Հայաստանում քարոզչության մասին բանախոսությանը հանդէս եկավ Գեղարդյան հոգեւոր ճեմարանի դասախոս, պ. գ. ք., դոցենտ Դովիկ Գրիգորյանը։

Տեղեկութիւն ընթացքում տոնի խորհրդին նմիրված հոգեւոր ու հայրենասիրական եղբոր համդես եկավ ճեմարանի «Էջմիածնի» երգչախումբը։



Հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ 1988 թ. երկրաշարժի զոհերի



Դեկտեմբերի 7-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ս. Դովհաննէս Մկրտիչ եւ Ս. Վարդան մատուռ-մկրտարանում Ն. Ս. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ 1988 թ. երկրաշարժի զոհերի հոգինների համազտությամբ համար։

Արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը եւ տիկին Նունե Սարգսյանը։

Նոր նշանակումներ

խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների բաժնի պատասխանատու Նաթան արք. Դովհաննիսյանը՝ անդրադառնալով մեր ժողովրդին աղետալի երկրաշարժի պատճառած ծանր կորուստներին եւ առ այսօր դեռ ամբողջությամբ չհաղթահարված հետեւանքներին։

Հոգեհանգստյան կարգի ընթացքում Մայր Աթոռի միաբանությունը Կեհարանից Հայրապետի գլխավորությամբ աղոթեց նաեւ օրերս զոհված օդաչուներ փոխզնդապետ Արմեն Բաբայանի ու մայրը Մովսէս Մանուկյանի եւ զինծառայող Հայկ Քարամյանի հոգիներին խաղաղության համար։



Միաբնդ՝ էջ 2

• Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Անդրանիկ վր. Գեղարդյանը ծառայության է նշանակվել Կենտրոնական եվրոպայի եւ Շվեդիայի Հայոց պատական պատվիրակությունում՝ հայրապետական պատվիրակի իշխանության ներքո։

• Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Երեմիա վր. Աբգարյանը, ազատվելով Գեղարդյան հոգեւոր ճեմարանում ստանձնած պարտավորություններից, իր հոգեւոր սպասավորությունը կերել Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց բեմում՝ բեմական առաջնորդի իշխանության ներքո։

• Սահակ քին. Սահակյանն ազատվել է Գեղարդյան հոգեւոր ճեմարանում ստանձնած իր պարտականություններից եւ ուսման կոչվել Գերմանիայում։

• Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրէն Վարդան եպս Նաւապարդյանը կշարունակի իր ծառայությունը Սուրբ Էջմիածնի եւ ԴԲԸ հովանու ներքո գործող հայորդաց տների հոգեւոր տեսչի պաշտոնում։

• Չաբարիա ծ. վրդ. Բաղդուկյանը, ազատվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանատանը ստանձնած պարտականություններից, նշանակվել է Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրէն։

Լուսավորման նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Արթուր Ադամովի «Պիեսներն» ու նրա քաղաքականությունը

Սկզբը՝ թիվ 22

Ադամովի «Պարողի» պիեսում խոսվում է «Ապագա» թերթի մասին, որի արտահայտած իմաստը մթություններով է լեցուն... Նույնպիսի ամորոշություններով են պատված Ադամովի պիեսների վերնագրերը՝ «Ներխուժում», «Վերագտնում», «Պարողի», «Եթե ամառը վերադառնա», «Մեն եւ փոքր մաներուն», որոնք միայն հեռավոր աղերս կամ առնչություն ունեն ներկայացվող իրադարձությունների հետ: Այդ ամենը ներկայացնում է մի ամերդաշնակ իրականություն, որն անգամ երագի մեջ չի դաշնավորվում որեւէ կերպ: Դա բաժանումներով լեցուն մի իրականություն է, որտեղ ոչ մի բան անում չունի. անգամ պարսպառիւծն ունի իր քաղաքականությունը ու պարն անհամապատասխան են միմյանց: Բայց հենց սա է արտոյրի գրականության էությունը, այն գրականություն, որն ամեն խճճվածության ու անկանոնության արտադրում է:

Փմայրույթն Ադամովի պիեսների գործողությունների (որոնք, եթե չհաշվենք բեմի վրա դերակատարների անընդհատ երթևեկը, շատ քիչ են) եւ խոսքի (որոնք հիմնականում երկխոսություններ են) առաջնորդ ազդակն է, որը, սակայն, գրեթե միշտ համագեցնում է այդ փնտրվածի էլ ավելի կոստյում: Այդ միտքը «Ներխուժում» դրամայի հերոս Պիեսը ձեռնարկում է այսպես. ամեն բան «անհունորեն անշոշափելի է, առանց ռելիեֆի»: Եվ անգամ այն դեպքում, երբ հերոսի մեջ ծնվում է այն միտքը, որ պիտի ապրել բոլորի նման, եւ որ իրեն «չիքն չի տրվի» այնքան ժամանակ, քանի դեռ չի գտել սովորական կյանք վարելու կերպը, շուտով համոզվում է, որ հնար չկա այդ «սովորական կյանքը» գտնելու, եւ որ այդ սովորական կյանքը գտնելու միակ միջոցը մահն է:

Դա մի հարաշարժ անշարժություն է, որը բնութագրական է Ադամովի բոլոր հերոսներին: Միս մի հատված «Պարողի» դրամայի հերոսների ամսպատակ պահվածքից. «... Լրագրողը շարունակում է ձեռքը վեր բարձրացրած պահել: Երբ նա ձեռքը իջեց-

նում է, Լիլին վեր է կենում: Պար ինչեցնող թեթեւ շարժում: Լրագրողը շարժվում է դեպի երկրորդ զուգի կինը, բայց նա արդեն վեր է կացել՝ գնալու: Լրագրողը խոնարհվում է նրա դատարկ աթոռի դիմաց: Երկրորդ զուգի տղամարդը մի քանի քայլ է անում դեպի Լիլին, բայց ճանապարհի կեսին կանգ է առնում եւ շարժվում դեպի իր զուգընկերուհին, որը ելքի մոտ է: Տնօրենը դարձյալ փորձում է բռնել Լիլիի ձեռքը, բայց ապարդյուն: Այս Տնօրենը վեր է կենում, դուրս գալիս եւ վերադառնում ռեստորանի կառավարչի հաղուստով» (նույն տեղում, էջ 91):


Պիեսում տրվում են անուններ՝ ժողով, Անդրե, Անտուան, Պիես... որոնք որեւէ մասնակցություն չունեն բեմում կատարվող իրադարձությունների կամ երկխոսությունների հետ. դրանք այդպես էլ մնում են լույ անուններ: Գրեթե այդպիսի վիճակում են նաեւ շատ այլ հերոսներ, որոնք արժեքներից հաճախակի վայր են ընկնում, պաշտում են բեմի հատակին, անհարկի են անմասն ծիծաղում, անշարժ դիրքով երկար ժամանակ կանգնում են կամ նստում, որոնք կարող են ունենալ «տգեղ գեղեցկություն» կամ «երկսեռ գեղեցկություն», որտեղ կարող է բեմի մի եզրը կերպարի «թաքուն երազը» լինել, որտեղ հերոսը կարող է «վեր կենալ եւ մտնել իր երազի մեջ» («Եթե ամառը վերադառնա»), եւ այսպես՝ շարունակ: Եվ եթե մտաբերենք հեղինակի՝ վերոհիշյալ պիեսին տրված խոսքը. «Ամբողջ պիեսը ոչ այլ ինչ է, քան Լարի, Թայի եւ Ամայի գզացմունքների վայրկյանների մի երկար շղթա: Նրանում ոչինչ պարզ չէ» (նույն տեղում, էջ 129), կարծում ենք, ամեն բան ասած կլինենք: Վերոհիշյալ պիեսում քանիցս «գործողություններին» մասնակցում է ճոճանակը, որն ասես խորհրդանշում է այն միջավայրը, որտեղ տարրաբերվում է ամեն բան. ոչինչ կայուն չէ ու հստակ, անկախ՝ ու է ճոճում, եւ կամ ուլբեր են ճոճվողները:

Նման տեսարաններն ու պատկերները շատ են Ադամովի պիեսներում, եւ ի պատիվ հեղինակի՝ պետք է ասել, որ դրանք հաճախ գրված են երեւակայության մեծ թռիչքներով:

Ադամովի որոշ պիեսներում, ինչպես դա յուրահատուկ է առհասարակ արտոյրի գրականությանը, նկատելի է ասելիքի քաղաքացիական որոշակի ուղղվածություն՝ միտում, հերքումն այն ամեն կանխորոշվածության ու ընդունված օրինաչափության, որոնք վտանգավոր են իրենց եռթյամբ, քանի որ մարդուն դարձնում են պարտականությունների գերի:

«71-ի գարունը» պիեսը հենց այդ մասին է: Իր հիմքում ունենալով փարիզյան կոմունայի իրադարձությունները՝ այն ուղղված է բոլոր նրանց դեմ, ովքեր ենթարկված էին կյանքի ամենօրյային, սովորականին, ովքեր ապրում էին տրամաբանության օրենքներով, սովոր «պատրաստի» գաղափարներով: Չերքազատում այդ ամենից, ահա պիեսի առաջադրած հիմնական ասելիքը:


Շնամարտություն է, որ գեղարվեստական երկի արժեքը կախված է ոչ միայն հեղինակային տաղանդից, այլեւ ընթերցողի ընկալելու ունակությունից: Այս երկուսին գումարվում է երրորդ կողմը, եթե խոսքը երկի թարգմանությանն է վերաբերում: Թարգմանիչը կրկնակի է պատասխանատու գեղարվեստական գործի արժեքներն հարցում՝ ոչ միայն թարգմանվող գործի ընտրության, այդ արժեքները հարազատորեն փոխանցելու եւ դրանք հետ կապված բարդությունները հաղթահարելու, այլեւ բնագիրը թարգմանելու ընթերցման ենթարկելու առումով: Առանց ավելորդ ոգեւորության կարելի է ասել, որ Ադամովի պիեսների թարգմանչուհի Սաթե Խաչատրյանը բարձր մակարդակով է լուծել իր առջեւ ծառացած



խնդիրները, ըստ ամենայնի օգտագործել հայոց լեզվի ինքնադրսեւորման հնարավորությունները, փոխանցել այդ պիեսներին բնորոշ մեղեքին ասելիքներն ու խոսքի սերտույթ երանգները, որոնք արդյունքում մենք ունենք Ադամովի պիեսների բնագիրն շատ հարազատ թարգմանությունների մի ամբողջ փունջ: Իրոք որ դժվարին գործ է թարգմանել արտոյրի թատրոնի որեւէ հեղինակի գործ, որտեղ առկա են կիսանդձափանցային երկխոսություններ, եւ որը Բեքթը «զավազկություն» էր կոչում՝ «խոսել ոչ մի կոնկրետ բանի» մասին:

Շարունակություն՝ էջ 7

ՀԱՅՐ ԱՆԴՐԵԱՍ ԿՈՆԱՆՈՍ



Ի՞նչ ուրախ օր է այսօր, սիրելի ունկնդիրներ, Սուրբ Ծնունդ է այսօր: Շնորհավորում են բոլորին: Գիտեմ, որ բոլորը վայելում եք այս ուրախ օրերը, տոնական մթնոլորտը, բոլորը սրտեւ ու երջանիկ եք. այդպես չէ: Պատկերացնում եմ՝ ինչ լավ ժամանակ է անցկացնում հիմա ձեր ընտանիքների հետ: Շուտով սեղան կնստեք, կուրախանաք, կզվարճանաք, նպարտեմի խանութներ կգնաք՝ քաղցրավենիք գնելու եւ ձեր հարազատներին այցելելու: Կծոռանաք պահիք, սննդակարգերի մասին. թեկուզ մի քիչ է գիրաճաք: Հիմա վայելելու ժամանակն է, այդպես չէ:

ՄԻԱՅՆԱԿ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԻՆ «ԱՆՏԵՍԱՆԵԼԻ անցումներ» ռադիոհաղորդումներից

Ա՛հ, ինչ-որ մեկն ի՞նձ ասում է, որ այդպես չէ: Ի՞նչ-որ մեկն ի՞նձ ասում է. «Հայր, բոլորը չեն, որ ձեզ պես ուրախ են այսօր»: Դե հա, եւ էլ շտապում եմ վերջացնել հաղորդումը, որովհետեւ շատ հրավերներ ունեմ այսօր, չգիտեմ՝ որտեղ առաջինը գնամ: Ի՞նչ: Ա՛հ, ինչ-որ մեկը դարձյալ խոսում է ի՞նձ հետ ու ասում. «Հայր, բավական չէ՞ խոսել ձեր՝ անչափ ուրախներիդ մասին, մի քիչ էլ մեզ վրա ուշադրություն դարձրու»: Այսինքն՝ ի՞նչ ասեմ, ի՞նչ վրա ուշադրություն դարձնեմ: «Մի քիչ էլ խոսի՛ր այս օրերի տխրության, վշտի մասին, որովհետեւ մեզ մնամ մարդիկ էլ կան աշխարհում»: Ո՛րո՛ւմ, ո՛րքեր եք դուք: «Մենք այն մարդիկ ենք, որոնք հիմա, մեքենայում նստած, հարազատներին այցելության չեն գնում, այն մարդիկ, որոնք կշարունակեն լսել «Անտեսանելի անցումներ» նաեւ այն ժամանակ, երբ դու կվերջացնես թո հաղորդումը, որովհետեւ պետք է գնա՛ս՝ ուտելու, խմելու, երաժշտություն լսելու, հեռախոսազրույցով ֆիլմեր դիտելու, այն մարդիկ, որոնք մոլորված Սուրբ Ծննդին կշարունակեն մնալ միայնակ ու լուռ»:

Լսե՛ք, մերեցե՛ք ի՞նձ, բայց եկե՛ք պարզաբանե՛ք այս հարցը: Այո՛, կարող եմ հաղորդումը մվիրել մենակության թեմային, բայց, մտածում եմ, այդպես որ ասում ես՝ հիմա մյուսների պես սեղան չես նստելու, միգուցե դու՛ էլ մեղավոր ես, գուցե քո կյանքով ես մենք: Գիտեմ, որ որոշ մարդկանց իրավիճակն է, սիրում են, ուզում են տեսնել

նրանք, բայց քանի որ այս մարդկանց, այսպես ասած, ինքնագնահատականը շատ ցածր է, կարելի է ասել՝ թաքնված եասիրություն ունեն իրենց մեջ, չեն ընդունում հրավերը եւ գերադասում են մենակ մնալ: Մենակ են մնում, տխրում ու թախծում: Դրա հետք կան ասում. միգուցե դու՛ ես մեղավոր, որ այսօր մենակ ես մնացել: Չգիտեմ, քննարկում ենք հիմա: Համեմայն դեպս, եթե այդպես է, ուշ չէ, դեռ կհասցնեք գնագահարել ու ասել. «Ես էլ կգամ ձեր հավաքույթին այսօր, ընդունում եմ ձեր հրավերը»: Այդպես արեք, մենակ մի՛ մնացեք այսօր, եթե լուրջ պատճառ չկա:

Այլ է վանականի, ճգնավորի, որեւէ մարդու կամավոր մենակությունը, երբ այդպես է Քրիստոսի լիակատար ներկայությունն է գգում, որովհետեւ դա այլես մենակություն չէ: Եթե գգում ես Քրիստոսի ներկայությունն այսօր, եթե սրտումդ գգում ես անսահման խաղաղություն, երջանկություն, ուրախություն, ուրեմն ավելորդ է խոսել մենակության մասին: Հայր Պաիսիոսը, օրինակ, եթե ողջ լինե՛ր, այսօր կգնար կողքի վանքը՝ պատարագի, հաղորդության կատարման, պատարագից հետո սեղան կնստե՛ր մյուսների հետ, իսկ հետո կգնար իր խցիկը եւ անսահման երջանկի կլինե՛ր, կլինե՛ր մենակ ու եղանակի. մենակ, այսինքն՝ առանց մարդկանց, սակայն լի Քրիստոսի ներկայությամբ: Եթե դու էլ մյուս բանն ես գգում, լավ, շատ էլ կալ ես անում, որ մենակ ես մնում:

Բայց, ասում եմ, գուցե մենք էլ մեղավոր ենք, որ այսօր մենակ ենք մնացել. գուցե մի քիչ տարօրինակ ենք, գուցե մեղավոր ենք, որ չենք անում առաջին քայլը, գուցե թո ընկերակցությունը երբեմն հոգնեցնում է մյուսներին, եւ դժվարանում են քեզ հետ շփվել: Տես, եթե մոլորվում ես, մի հուսահատվիր, որովհետեւ դա թաքնված եասիրություն է, եւ մի՛ ասա. «Ես այսպիսին եմ, ինչպիսին որ կամ, ինձ չի հետաքրքրում» դուր եմ գալիս ուրիշներին ո՞չ ոչ»: Ո՛չ, ո՛չ, եթե դու մեղավոր ես, խոնարհեցիր ամեն ինչից փնջ: Իրոք որ դժվարին գործ է թարգմանել արտոյրի թատրոնի որեւէ հեղինակի գործ, որտեղ առկա են կիսանդձափանցային երկխոսություններ, եւ որը Բեքթը «զավազկություն» էր կոչում՝ «խոսել ոչ մի կոնկրետ բանի» մասին:

Ընդունիր, որ այդպես է, ճանաչիր թո անձը: Ընդունիր, որ բնավորությունդ երբեմն շատ ծանր է: Եվ գիտե՛ս ի՞նչ, եթե ընդունես դա, Քրիստոսը կսիրի քեզ, որովհետեւ կարծես Քրիստոսին ասելիս կլինես. «Տե՛ր, այս տարի, երբ մորից ծնվեցիր, Խաղիքը շատ ունեմ: Ես քեզ աշխատանք կտամ, Տե՛ր, աշխատանք ի՞նձ հոգում: Ես մի տարօրինակ մարդ եմ, ուղիղ ի՞նձ, բուժիր: Տես, Տե՛ր, ծնվել ես, եւ ոչ ոք ի՞նձ չի ցանգադրում՝ հրավիրելու՝ մասնակցելու իրենց սեղանին, ոչ ոք չի ուզում ի՞նձ տեսնել: Գուցե ես էլ մեղք ունեմ դրա մեջ»: Ուրեմն քննե՛ք մեր ամեն ու խոնարհեցե՛ք, ապաշխարե՛ք ու խնդրե՛ք Աստուծո ողորմածությունը:

Շարունակելի

Թարգմանությունը հունարենից՝ Տաթևիկ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

ՎԵՅԼԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՆՈՒՄ

«...Հայոց ազգն եղաւ առաջինը, որ Քրիստոսի աստուածութիւնը ճանաչեց եւ նորա սուրբ Անետարանի փրկարար վարդապետութիւնը զրկեց, որով արդարեւ քրիստոսական երանութիւնն եւս առաւ...»
(«Արարատ», 1868, Ե (թիւ 1), էջ 4-5)

Այս տարի լրանում է հայագիտության մի պայծառ կանգնելի՝ «Արարատ» ամսագրի 150-ամյակը. կանթեղ, որ լուսավորեց սերունդների միտքն ու հոգին՝ առաջնորդելով գիտության բազմափառ արահետով: «Արարատ»՝ Մայր Աթոռ Սուրբ Եփեմանի պաշտոնական ամսագրի արժանի ժառանգորդը, ավանդության պահպանողն ու շարունակողն այսօր «Էջմիածին» ամսագիրն է:

«Արարատը» հրատարակվել է 1868-ի մայիսի 1-ից մինչև 1919 թվականը: Ամսագրի առաջաբանը հստակ վկայում է, որ 1868-ին այն տպագրվել է որպես «Ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական եւ բարոյական գիտելեաց» եւ իբրեւ «աշխատասիրութիւն միաբանից Սուրբ Էջմիածին» (տե՛ս ամսագրի 1868 թվականի Ե (թիւ 1) համարի տիտղոսաբերքն ու առաջաբանը. մշնջ. որ ամսագիրը տպագրվել է 1868 թվականի մայիս ամսից, ուստի տպը թվականի առաջին համարը մայիսյանն է): 1869 թ. Բ (թիւ 10) համարում գետեղված է հայտարարություն՝ ամսագրի ծավալը մեծացնելու (էջ 133), իսկ 1870 թ. Գ (թիւ 11)-ում հավելված տպագրելու վերաբերյալ (էջ 296):

Արդեն 1898 թվականից «Արարատ» ամսագրի տիտղոսաբերքին զրկվել է «Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռի Սուրբ Էջմիածին»:

Ամսագիրը հրատարակվել է Հայոց հայրապետ Գեղորդ Դ Կոստանդնուպոլսեցու ամփոփական նախաձեռնությամբ: «Արարատը» տպագրվել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերն ու նշանակությունը բարձրացնելու եւ առավել ամրապնդելու, նրա դավանաբանական դիրքորոշումը ներկայացնելու եւ ամրագրելու, հայ ազգային ինքնությունն ու նկարագիրը պահպանելու նպատակով: Ամսագիրը խմբագրել է միաբաններից կազմված կոլեգիան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նշանակած խմբագրի ղեկավարությամբ: Այս առումով չափազանց հետաքրքիր է «Արարատ» ամսագրի խմբագրման կանոնները, որոնք գետեղված են 1868 թվականի Դ համարի 51-րդ էջում: Ներկայացնենք այդ կանոններից միայն որոշները՝

ա. Արարատ անուն ամսագիրն պարտի

հրատարակիլ ամսոյ յամիս՝ աշխատութեամբ միաբանից Սուրբ Աթոռոյ:

բ. Անդամք Արարատ ամսագրին են ութն ամիսը, որոց վերայ հարկ, անշուշտ, եղեալ է պատրաստել զմիք ամսագրոյն:

գ. Զմնութիւն Արարատայ է անմիջական տեսչութեամբ Վեհափառ Հայրապետին որոյ են հրամանաւ իսկ տպագրի:

ժա. Ազգային, կրօնական, պատմական եւ բարոյական մասունք Արարատայ, բաց ի բանասիրականն, պարտին շարագրել պարզ աշխարհաբան լեզուաւ:

Այսինքն՝ ամսագրի խմբագրության աշխատակազմը բաղկացած է եղել ութ միաբանից: «Արարատ» ամսագրի խմբագիրներն են եղել Ժամանակի ուսյալ եւ նշանավոր հոգեւորականները՝ Աբել արք. Մխիթարյան (1804-1873 թթ.), Խորեն վրդ. Ստեփանն (1840-1900 թթ.), Կարապետ վրդ. Տեր-Սկրտչյան (1866-1945 թթ.), Գալուստ Տեր-Սկրտչյան (1860-1918 թթ.), Գարեգին վրդ. Հովսեփյան (Գարեգին Ա Հովսեփյան. 1867-1952 թթ.), Հուսիկ արք. Սովիսյան (1853-1924 թթ.) եւ այլք:

1868 թվականի Ա համարի առաջաբանում նշվել է, որ ամսագիրն ունենալու է հետևյալ բաժինները՝ Կրօնական, Պատմական, Բանասիրական եւ Բարոյական: Սակայն Կրօնական բաժնից առաջ գետեղվել է «Պաշտօնական տեղեկություններ» բաժինը, որտեղ ընդգրկվել են Սուրբ Էջմիածնի Սինդոի գրադրությունից բաղկացած, կարելու կարգադրություններ, հայրապետական տնօրինություններ: Սույն բաժնում հրատարակվել են նաեւ հայրապետական կոնդակներն ու օրհնության գրերը: Բացի նշյալ հիմնական չորս բաժիններից՝ ամսագիրն ունեցել է մի շարք այլ ոչ ծավալուն բաժիններ: Այսպես՝ «Նամակաւք» ճակնեաց՝ խորագրի ներքո տպագրվել են հատվածներ, պատասխաններ Հայոց հայրապետների նամակագրություններից, ուղերձներից, գրագրություններից (օրինակ՝ Խաչիկ Ա Արշարունեցի կաթողիկոսի (973-992 թթ.) կոնդակը՝ տրված փրկչական 976 թվականին. տե՛ս 1868, Ե (թիւ 3), էջ 31-34): Տպագրվել են նաեւ հակելոծ ծանուցումներ, որոնք վերաբերել են հայկական գաղութներին, ծիսական դպրոցների գործունեությանը, մշակութային խնդիրներին, ամսագրի հրատարակման աշխատանքներին եւ այլն:

«Արարատի» տարբեր համարներում ռուսումնասիրելիս հանդիպեցինք ուշագրավ իրողության. ամսագրում պարբերաբար գետեղված են ազդեր, որոնք լուսաբանում



են, թե ինչու է պարբերականի այս կամ այն համարի հրատարակությունն ուշացել: Այսպես՝ 1869 թվականի Ե (թիւ 3) համարի 72-րդ էջում նշվում է, որ ամսագրի հրատարակությունն ուշացել է Մայր Աթոռի տպարանի փակման պատճառով:

Ամսագրում առկա են Հայ Եկեղեցու թեմերին, նրանց հոգեւոր, մշակութային ու կրթական կյանքին վերաբերող նյութեր, որոնք արժեքավոր սկզբնաղբյուր են՝ տվյալ ժամանակաշրջանի իրադարձություններն ու հանգամանքները լուսաբանելու առումով: Այսպես՝ ամսագրի տարբեր համարներում ներկայացվել են հայոց թեմերում գործող ծիսական դպրոցների գործունեությանը, վարժապետներին ու սաներին վերաբերող կանոններ (օրինակ՝ 1868-ի Զ (թիւ 2), էջ 70-72), որոնք ռուսումնասիրելով՝ համապարփակ պատկերացում ենք կազմում նշյալ ժամանակահատվածի հոգեւոր ու կրթական, մանկավարժական եւ բարոյահոգեբանական խնդիրների վերաբերյալ: Այդ հիմնահարցերին առնչվող արժեքավոր հոդվածներ է հրատարակել մեծանուն Ղազարոս Աղայանը՝ «Խորհրդածութիւն դաստիարակութեան վերայ. Սատակ դաստիարակութեան. Նախագիտելիք մտքի մասին. Հոգի» խորագրով (1869, Ե (թիւ 1), էջ 22-24, Զ (թիւ 2), էջ 44-48, Թ (թիւ 5), էջ 118-128, Ժ (թիւ 6), էջ 160-177): Հետաքրքիր է նաեւ Ղալիթ Սվաղեյանի «Չափազանց սաստկութիւն մեծանուն Ղազարոսի կնիք» հոդվածը, որում քննարկվում են մանկավարժական մեթոդներն ու գործիքակազմը (1870, Ե (թիւ 3), էջ 105-106, Ը (թիւ 4), էջ 142-143): Այսօր են կարող է օգտագործել «Հայոց մայրերուն մանկանք բարոյական դաստիարակութեանը համար մէկ խոր-

հուր» (1868, Թ (թիւ 6), էջ 76-80, Ժ (թիւ 7), էջ 92-93, ԺԲ (թիւ 8), էջ 105-108): Հրատարակվել են նաեւ վանական դպրոցների կանոնադրություններ:


Ուշագրավ է, որ «Արարատը» անդրադարձել է նաեւ Հայ Եկեղեցու՝ թույլ եկեղեցիների հետ ունեցած հարաբերություններին, հայ կաթողիկ եւ ավետարանական համայնքների կյանքին:

«Բարոյական» խորագրված բաժնում լույս են տեսել հանելուկներ, առածներ, ասացվածքներ, առակներ, օրագրալուրեր, զվարճալի դեպքեր:

Նստ ելոյթան՝ «Արարատ» եղել է նշյալ ժամանակաշրջանում Կովկասում հրատարակվող կրօնագիտական, եկեղեցագիտական, ազգովածաբանական, հայագիտական, բանասիրական առաջին լուրջ պարբերականը: Մայր Աթոռի պաշտոնական ամսագիրը նպաստել է հայագիտության, բանասիրության, գրականագիտության, կրօնագիտության, եկեղեցագիտության զարգացմանը, կարելու դերակատարում է ունեցել հայ ժողովրդի հասարակական, մշակութային ու հոգեւոր կյանքում: Ամսագիրը համախմբել է ժամանակի նշանավոր գիտնականներին, աստվածաբաններին, հոգեւորականներին, գրողներին, պատմաբաններին ու հայագետներին: Ամսագիրն աշխատակցել է իրենց անգնահատելի ավանդն են թողել Մաղաքիա արք. Օրմանյան, Երվանդ Տեր-Մինասյանը, Կոմիտասը, Ղազարոս Աղայանը, Հրաչյա Ամառյանը, Նիկողայոս Արմենը, Երվանդ Լալայանը, Սահակ վրդ. Քաստամյանը, Ստեփան Մալխասյանը, Լեոն, Գաբրիել արք. Այվազովսկին, Նիկողայոս Մառը, Գրիգոր Ղափանցյանը եւ ուրիշներ:

Շարունակությունը՝ էջ 8

ԱՆՏՈՆԻ ՄԵՆՈՐԱԿԱՆ ՍՈՒՐՈՇՄԱԿԻ



Կյանքն ու աղոթքը միանգամայն անբաժանելի են: Կյանքն առանց աղոթքի կյանք է, որում բացակայում է նրա կարելու ազդու չափումը, կյանք է «խաթոթյան» մեջ՝ առանց խորության, կյանք է լոկ երկու չափումների՝ տարածության ու ժամանակի մեջ, կյանք է, որ գոհանում է երեսուրկականով, գոհանում մերձավորով, մերձավոր՝ որպես ֆիզիկական երեսույթի, որում չկան

ԿՅԱՆԵՆ ՈՒ ԱՂՈՐԹԸ ՄԵԿ ԵՆ

աղյ կյանքի ճակատագրի բոլոր չափումներն ու... հավիտենականը:

Աղոթքի նշանակությունը այն է, որ հենց կյանքով բացահայտվի եւ հաստատվի այն փաստը, որ ամեն բան ունի հավիտենականի իր չափը, եւ ամեն ինչ ունի ամենից իր չափումը: Աշխարհը, որում ապրում ենք, ամսատված աշխարհ է: Մենք ինքներս ենք այն խելաթյուրեղ, որն էլ իր

ելությանը դուրս է եկել Աստծո ողորմությունից եւ այնուհանդերձ սիրված է Աստծուց: Կյանքի արժեքն Աստծո աչքին իր Միածին Որդու կյանքն ու մահն է, իսկ աղոթքը վկայում է, որ մենք գիտենք դա, գիտենք, որ մեր շուրջը եղած ամեն մարդ էլ ամեն առարկա սուրբ է Աստծո համար, սիրված եւ անհատական, ուստի դրանք թանկ են դառնում նաեւ մեզ համար: Չաղոթել նշանակում է Աստծուն թողնել աշխարհի բոլոր գոյություններից անդին եւ ոչ միայն Նրան, այլեւ այն ամենը, ինչը Նրա կողմից ստեղծված աշխարհի համար ունի արժեք, այն աշխարհի, որում ապրում ենք:

Մեզ հաճախ թվում է, թե դժվար է համադրել կյանքն աղոթքի հետ: Դա սխալ մտնք է, միանգամայն սխալ մտնք: Դա գալիս է նրանից, որ մենք սխալ պատկերացում ունենք թե՛ կյանքի եւ թե՛ աղոթքի մասին: Մենք երեսակայում ենք, թե իբր կյանքն այն է, որ դեռ ու դեռ ընկնենք, իսկ աղոթքն այն, որ ինչ-որ տեղ առանձնանանք եւ մոռանանք ամեն ինչ՝ եւ մեր շուրջը եղածի եւ մարդկային մեր փնականների մասին: Եվ դա ճիշտ է: Դա զոպարտություն է թե՛ կյանքի եւ թե՛ աղոթքի հանդեպ:

Որպեսզի սովորենք աղոթել, առաջին հերթին պետք է համերաշխ լինենք մարդու

բոլոր փնականների հետ, համերաշխ լինենք նրա ճակատագրի եւ ողջ աշխարհի ճակատագրի իրողության հետ՝ մինչեւ վերջ այն վերջնելով մեզ վրա: Սա է մարդեղացած Աստծո հայտնի արարքի ելույթը: Սա է ողջ հաստատումը նրա, որ մենք կոչում ենք միջնորդավորություն: Սովորաբար աղոթալի միջնորդավորումն ընդունում ենք որպես բաղադրվածի հիշեցում Աստծուն այն մասին, որ եւ մոռացել է ամեն իրականում դա մեր համար է, որպեսզի բայլ անենք, որը մեզ կզինի ողբերգական իրադրության կենտրոնում, քայլ՝ մեմա Քրիստոսի ջալին, որն արվեց Մարդու կողմից մեկ անգամ ու ընդմիջու: Մենք պետք է կատարենք մի քայլ, որը մեզ կզինի իրադարձությունների կենտրոնում, որտեղից մենք երբեք չենք կարող դուրս գալ. դա քրիստոնեական համերաշխությունն է, որը միաժամանակ ուղղված է երկու հակադիր ուղեծիրներին, այն է՝ մարդեղացած Քրիստոսը՝ ճշմարիտ մարդը եւ ճշմարիտ Աստվածը, մինչեւ վերջ համերաշխ է մարդու հետ, երբ մեղավոր մարդը դիմում է Աստծուն եւ մինչեւ վերջ համերաշխ է Աստծուն եւ մինչեւ վերջ համերաշխ է մարդու հետ, երբ եւս է դիմում մարդուն: Այդ երկակի համերաշխությունը մեզ դարձնում է ինչ-որ իմաստով օտար երկու ճամբարների համար էլ եւ միեւնոյն ժամանակ՝ երկուսի հետ էլ միասնական: Սա է քրիստոնյա լինելու իրականության հիմքը:

Շարունակությունը՝ էջ 6



Տեղյանի դիմանկարը, գործ՝ Վրոյր Գալստյանի

ԲԱԽԱՏԵՆԾ ՏԵՐՅԱՆ

(Երկիր Նաիրի, I, 240), «անարե» (Սթնշաղի անուրջներ, I, 81), «անարեգ» (Անտիպ էջեր, II, 65), «անգվարթ» (Անտիպ էջեր, II, 61), «անժպիտ» (Ոսկի հեքիաթ, I, 159), «անուրախ» (Սթնշաղի անուրջներ, I, 36), «անվարդ» (Անտիպ էջեր, II, 17), «ճշմարիտ» բառի փոխարեն «անսուտ» (Սթնշաղի անուրջներ, I, 87), «բնական» բառի փոխարեն «անարվեստ» (Երկիր Նաիրի, I, 252), «բարի» բառի փոխարեն «անջար» (Անտիպ էջեր, II, 15), «խավար» բառի փոխարեն «անշուղ» (Սթնշաղի անուրջներ, I, 80), «ուրախ» բառի փոխարեն «անթախիծ» (Սեւագրություններ, II, 162) բառերը, իսկ «լուսավոր» բառի իմաստը արտահայտում է «անաղուտ» (Անտիպ էջեր, II, 55), «անսովոր» (Ոսկի շրթա, I, 229), «անմուծ» (Սթնշաղի անուրջներ, I, 76) բառերով դարձյալ կերտելով հոմանիշներ են նպաստելով խոսքի թարմությանն ու ինքնատիպությանը: Բացի դրանից՝ նմանօրինակ նորաբանությունները, անցնելով լեզվին, հարստացնում են բառապաշարը բանաստեղծական հոմանիշներով և որպես համապատասխան հասկացությունների արտահայտման տարբերակային միջոցներ՝ նախ և առաջ նպաստում են խոսքի բազմազանությանն ու գեղարվեստականությանը:

«Սթնշաղի անուրջներից» հետո Տեղյանի լեզվում որպես «հայտնի», «հայկական» բառերի համարժեքներ, գործածվում են «Նաիրի» բառից կազմված «մաիրիտի», «մաիրյան», «մաիրական» նորանշանությունները: Այս մասին Ռ. Իշխանյան գրում է. «Նախկինում գործածված շատ բառերի հետ «Նաիրի»-ի՝ էլ նոր բոլոր ու երանգ ստացավ խոսքի մեջ ու այդ շատ բառերի հետ որդեգրվեց հետագա հայ բանաստեղծության, նաեւ արձակի, նույնիսկ քննադատության, հրապարակախոսության ու բնական գիտությունների լեզուներում» (Ռ. Իշխանյան, Տեղյանի լեզվական արվեստը, մաս Ա, Ե., 1972, էջ 79-80): Նշեմք, սակայն, որ «Նաիրի» Տեղյանից առաջ էլ հայտնի էր իբրեւ ասորեստանյան շրջանից եկող պատմաաշխարհագրական տեղանուն, եւ Տեղյանը Հայաստանի պատմական անվանումների Նաիրին գերադասել է ոչ թե, ինչպես Ռ. Իշխանյանը է նշում, «հայրենի երկրի նկատմամբ իր քնքշանքն ու ջերմությունը արտահայտելու համար»,

այլ հենց «Նաիրի» բառի արտահայտած իմաստի համար: Անհնար է, որ արեւելագետ, պատմաբան եւ լեզվաբան Տեղյանը ծանոթ չլիներ Նաիրի տեղանվան ստուգաբանություններին ու չիմանար, որ «Նաիրի» բառը Հայկական լեռնաշխարհի՝ սեմական լեզուները կողմ մեր հարեւանների համար նշանակել է «կրակ», «լույս» (Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3-րդ, Ե., 1991, էջ 947): Պատահական չէ, որ Տեղյանը «Երկիր Նաիրի» խորագրով բանաստեղծական մի ամբողջ շարք ստեղծեց, առանց որի էական թերի կլիներ հայ հայրենասիրական պոեզիայի պատկերն առհասարակ:

20-րդ դարի 40-50-ական թվականներից անմիջապես կենսունակություն ստացած բայականությունն ավելի վաղ դրսևորվումներ ունեցավ Տեղյանի չափանոյուն: Գոյականներից բայեր կազմելը հեղինակին նորակազմությունների ստեղծման հիմնական եղանակներից մեկն է, որը, ըստ Լ. Եզկյանի, կատարվում է լեզվական նմանողություն (անալոգիա) սկզբունքով եւ նպաստում խոսքի սեղմությանը (Լ. Եզկյան, Հայոց լեզվի ռեալիզմություն, Ե., 2003, էջ 139): Ահա օրինակներ՝ «բուրվառե», «ճարկվեցին ամուշ բույր են բուրվառում...» (Սթնշաղի անուրջներ, I, 46), «արշալույս»՝ «Արշալույսեց իմ երկիրն աղուտ...» (Ոսկի հեքիաթ, I, 154), «լուսավառե»՝ «Լուսավառված է իմ սեւ օրերում // Ամուշ ամուշ, որպես արշալույս...» (Ոսկի հեքիաթ, I, 190), «արեգակվեց»՝ «Իմ խեցն սրտում կյանքի տենց է արեգակում...» (Սեւագրություններ, II, 182), «փարոսեց»՝ «Քո ժրպիտն է անժպիտ // Ուղիներս փարոսում...» (Ոսկի հեքիաթ, I, 159), «մթնշաղվեց»՝ «Անջատման պես տխուր խոսքեր, // Հոգուս լույսեր մթնշաղված...» (Սթնշաղի անուրջներ, I, 66): «Բերականվեց»՝ «մթնաղվեց» եւ «Սթնշաղի անուրջների» առաջին տարբերակում գործածված «արցունքվեց» բառերում հանդես եկող -վ- ածանցը, ինչպես իրավացիորեն նշում է Ա. Աբրահամյանը, ոչ թե քերականական ձեւոյթ է, այլ հանդես է գալիս «բառակազմական-բարդադրական դերով» (Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գ. 1, Ե., 1962, էջ 656):

Բառակազմական նորմաների ձեւային շեղումները իմնականում դրսևորվում են

բառերի կրճատ ձեւերի գործածությամբ, ինչպես օրինակ՝

Աղուտ նայվածն իր ձեռքի պես խորն է, Իր նայվածն էլ է ճշում – «Չնայ»... Կանայք օրրուն են իրանց իրանը, Կավակներն՝ գեշի կարոտ... (Անտիպ էջեր, II, 105)

* * *

Դու չարչարանաց ահավոր ժամին եկար այցելու իմ երկիրն անհույս... (Անտիպ էջեր, II, 99)

Ընդգծված բառերի կիրառություններն արդեն դիպվածային բառերի օրինակներ են: Բացի նշվածներից՝ Տեղյանի չափանոյուն տեղ են գտել նաեւ այլ բառերի կրճատումներ, օրինակ՝ «աշնային»՝ «Եվ որպես վիտ լծերն են ցուրմ // Ցրտում աշնային – մշուշների տակ...» (Անտիպ էջեր, II, 77), «աշնանուտ»՝ «Որպես տերեւն աշնանուտի՝ հողմի դեմ, // Դողում ես դու, որպես շուղը եղգի...» (Այլ բանաստեղծություններ, I, 270), «աշնամեծ»՝ «Աշնամեծի ահաբեկված մի թռչուն // Ծվարել է իմ հոգու պես որբ մա էլ...» (Անտիպ էջեր, II, 106), «գարնային»՝ «Քո համբույրը գարնային իմաստուն է ավելի, // Քան գիտուններն այս խոժոռ, գրքերն այս սթրն...» (Անտիպ էջեր, II, 103) եւ այլն: Ընդունված կարծիք է, որ լեզվում կատարվող կրճատումները, նույնիսկ հնչյունների կրճատումները, «տնտեսման ձգտումի արտահայտություն են» (Новые слова и словари русских слов, Л., 1978, էջ 81): Նմանօրինակ բառերի դերն ավելի բան ռճական է, իսկ բանաստեղծական խոսքում նաեւ մեծ չափով՝ դիմադրում տալու չափով:

Տեղյանի բանաստեղծական առաջին ժողովածուում տեղ են գտել քանից ավելի նորակազմ բառեր, իսկ հետաճյուն բանաստեղծություններում հեղինակային նորակազմությունների թիվը հասնում է շուրջ երեք տասնյակի: Հայտնի է, թե ինչ ազդեցություն ունեցավ Տեղյանի լեզվական արվեստը ժամանակի ու հետագայի բանաստեղծության վրա: Չարենցն իր բանաստեղծությունների առաջին ժողովածուի խորագրում գործածեց տեղյանական «տխրադալուկ» բառը, որը տեղ գտավ նաեւ Սարմենի խոսքերում: Այլ է Ռ. Նարազյանի տեսակետը նշված բառի գործածության վերաբերյալ: «Այդ բառը հայոց լեզվի բառապաշարում, այնուամենայնիվ, մնաց մեկուսացած...» (Ռ. Ն. Նարազյան, Դիպվածային եւ պոետիզմալ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծման համակարգում // Լեզվի եւ ոճի հարցեր (գիտ. հոդվածների ժող.), հ. 7, Ե., 1983, էջ 201):


Շարունակությունը՝ էջ 8

ԿՅԱՆՔՆ ՈՒ ԱՐՈՒԹՔԸ ՄԵԿ ԵՆ

Սկիզբը՝ էջ 5
Դուք կհարցնե՞ք՝ «Ի՞նչ է պետք անել»: Ահա թե ինչ. աղոթքը ծնվում է երկու ակունքներից. կամ դա մեր հիասքանչ գարնանը է Աստծո գործերի՝ մեր մերձավորների եւ մեզ շրջապատող աշխարհի հանդեպ՝ չնայած դրանց սովորուտ կողմերին, կամ էլ դա մեր, մանավանդ ուրիշի ողբերգականության հանդեպ ունեցած զգացումն է: Բերդյունեն ասում է. «Երբ ես սոված եմ, դա ֆիզիկական երեւոյթ է, երբ սոված է հարեւանս, դա բարոյական երեւոյթ է»: Ահա եւ ողբալի վիճակը, որ կանգնած է մեր առջեւ ամեն վայրկյան՝ իմ հարեւանը միշտ քաղցած է: Դա միշտ էլ, որ հացի խաղող է, դա հաճախ քաղց է մարդկային որեւէ արարող, որեւէ քննչամբի հանդեպ: Յենց այստեղ էլ սկսվում է աղոթքը՝ գեարտությունը գարնանային եւ ողբերգականի հանդեպ: Բամի դեռ կա այդ գթասրտությունը, ամեն բան հեշտ է. երանելի վիճակում հեշտ է աղոթք, հեշտ է աղոթել նաեւ, երբ մեզ պատում է տխրության զգացումը:

Իսկ մնացալ ժամանակները՝ Ահա թե ինչ. այլ բանակներում աղոթքն ու կյանքը պետք է մեկ լինեն: Ես ժամանակ չունեմ այդ մասին շատ խոսելու, բայց ուզում

եմ ուղղակի ասել՝ առավոտյան վեր կացեք, կանգնեք Աստծո առաջ եւ ասացեք. «Տէր, օրհնիր ինձ եւ օրհնիր այս սկսվող օրը», եւ հետո այդ օրվա ամեն ինչին վերաբերվեք որպես Աստծո պարգևի, իսկ ձեզ՝ որպես Աստծո բանբերի այն անհայտության, ինչն իրենից ներկայացնում է սկսվող օրը: Դա ուղղակի նշանակում է ինչ-որ ավելի դժվար մի բան, այսինքն՝ ինչ էլ որ պատահի այդ օրվա ընթացքում, խորք չէ Աստծո կամքին. ամեն բան, առանց բացառության, մի հանգամանք է, որի մեջ Տէրը կամեցում է դնել քեզ, որ դու լինես իր ներկայությունը, իր սերը, իր կարեկցությունը, իր ստեղծարար բանականությունը, իր գործունեությունը: Դրանից զատ, ամեն անգամ, երբ դու համոզվում ես այս կամ այն իրողությանը, որ այն ես, ում Աստված դրել է, որպեսզի կատարես քրիստոնյայի ծառայություն, դառնաս Քրիստոսի մարմնի մասնիկը եւ Աստծո գործիքը: Եթե դու այդպես վարվես, ապա հեշտությամբ կտեսնես, որ ամեն ակնբարոյի պիտի շուրջ օրա դեպի Աստված եւ ասես. «Տէր, պայծառացրո՛ւ իմ միտքը, ամրացրո՛ւ եւ ուղիղի՛ր իմ կամքը. տու՛ր ինձ բոցավառ սիրտ, օգնի՛ր ինձ»: Այլ պատերի կարող ես ասել. «Շնորհակալ եմ, Տէր»: Եթե իմաստուն ես



եւ կարող ես շնորհակալ լինել, կիսաապիտ հիմարություններին, որ կոչվում է սմափառություն կամ հպարտություն, երբ երեւակայում ես, թե իբր ինչ-որ բան ես արել, որ կարող էիր եւ չամե: Դա Աստված արեց: Աստված մեզ մվիրեց սքանչելի հնարավորությունը այն ամե: Եվ երբ երեկոյան կրկին կանգնես Աստծո առաջ եւ անմիջապես վերհիշես ամենդ օրը, կարող ես փառաբանել Աստծուն, երաստապարտ լինել, արտասուք թափել ուրիշներին եւ քեզ համար:

Եվ եթե այդ կերպ կարողանաս քո կյանքը միավորել աղոթքի հետ, նրանց միջեւ երբեք անընդհատ չի լինելու, եւ կյանքը կդառնա այդպիսի, ամեն պահի բորբոքվող կրակ, որն ավելի ու ավելի կբողբավում է կրառնա ավելի պայծառ եւ քեզ ընդմիշտ կվերափոխի, կարծրի՛ր այն վառվող մորեմին, որի մասին ասվում է Սուրբ Գրքում (Ելք. 4 2):

«Գործեր» ժողովածուից, 2002 թ.

Թարգմանությունը՝ Ա. ՍԱՍՏԱՆՅԱՆԻ

Անսահման աղանդավոր ու անսահման հայրենասեր ՈՒԼԵԼՈՒՄԵՆ ԻՍՐԱԵԼԻԱԿԱՆ — I I O

Սկիզբը՝ թիվ 21-22

Իսրայելյանը սոսկ մեծ ճարտարապետ չէր, այլ մանկ հայկական ճարտարապետության մեծ խուզարկուներից ու մեծ գիտակներից մեկը. մանրամասն հետազոտել ու չափագրել էր հայկական ճարտարապետության կառուցմանը, ուսումնասիրել հայ ճարտարապետական արվեստի տարրերը, լիովին ըմբռնել դրանց դերն ու նշանակությունը, խորապես զգացել գեղարվեստական արժեքն ու հզորությունը, ունկնդրել հայոց քարե երաժշտության ամեն մի նշանը:

Ինչպես վերը արդեն նշել ենք, 1941-1943 թթ. Իսրայելյանն աշխատել է Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեում, որի նախագահն ակադեմիկոս Հովսեփ Օրբելին էր, տեղակալը՝ Նիկոլայ Տոկարսկին: Աշխարհագրորեն պատերազմի պատճառով գոյություն ունեցող հուշարձանների վերականգնման համար ամիսներվա միջոցներից կոմիտեն ժամանակավորապես զբաղվում էր գիտահետազոտական աշխատանքներով: Այստեղ աշխատած երկու տարվա ընթացքում Իսրայելյանն ուշադիր ուսումնասիրում է կոմիտեում եղած հիուրուտ յուրօրինակ չափագրությունները, լուսանկարները, նեգատիվները, գրականությունը, գիտական հաշվետվությունները, մասնակցում գիտարշակներին՝ չափագրելով ու նկարելով շատ հուշարձաններ:

Կոմիտեում ձեռավորված գիտական մթնոլորտը շատ օգտակար ու նպաստավոր եղավ երիտասարդ արվեստագետի համար: Այս հաստատությունում աշխատելը մեծ հնարավորություն ընձեռեց նրան ի մոտո ծանոթանալու հայ ճարտարապետությանը, ավելի լուրջ ուսումնասիրելու հայրենի ճարտարապետությունը, ավելի համոզված կատարելու պրպտությունները տվյալ ժամանակի ճարտարապետության մեջ եւ ավելի լավ հասկանալու նոր պահանջների իրականացումը իրն անհրաժեշտ դերն ունեցող միջոցներով: Հենց այս տարիներին Իսրայելյանը ուղևորվեց շրջագայեց Հայաստանի ողջ տարածքով:

Այդ տարիներին մասին ճարտարապետն ասել է. «Հետո պատերազմ... Ինձ թողեցին հուշարձանների պահպանության կոմիտեում: Այստեղ ես անցա իմ երկրորդ ու ամենամեծ դպրոցը: Բոլոր արձակուրդներս, դեռ ուսանողական տարիներին, անց էի կացրել Հայաստանում: Մի տուպրակ, մի ալյուն վերցնում

ու գնում էի ամենատարբեր բնակավայրեր, ուսումնասիրում տեղի կոթողները, նշումներ, նկարներ անում, դիտում ու լցված, հարստացած վերադառնում:


Պատերազմի տարիներին էլ ման էի գալիս Հայաստանի գյուղերում, քաղաքներում, հին ու նոր բնակավայրերում, նորից ու նորից դիտում մեր կոթողները, սովորում ու լցվում ուժով, հավատով, վստահությամբ, ներշնչվում էի ու ներշնչում ուրիշներին: Վերադառնում էի ու հաշվետվություն ներկայացնում կոմիտեին: Դրանք սոսկ տեսչական հաշվետվություններ չէին: Դրանց մեջ գիտական հարցադրումներ կային, ճարտարապետական վերլուծումներ, ձեռքի առաջացման բնութագրումներ:

Այդ տարիների հետ ես կապված նաեւ հայկական գավաթների ու խաչքարերի ուղղությամբ Իսրայելյանի կատարած հետազոտական փորձերը. նա հիմնադրապես ուսումնասիրում է խաչքարերը, նկարում դրանց մատիտով եւ գրում մի մեծ ուսումնասիրություն, որը 1948 թ., բնականաբար, չէր կարող լույս ընծայվել: Բացի դրանից՝ հիմնական ամենեւին էլ մտադիր չէր այն հրապարակել. այդ աշխատանքը կատարել էր Ռուդկալի ուսումնասիրության նպատակով: Բնութագրում, բարեբախտաբար, Վարազդատ Յարությունյանը, ինչեղով այս աշխատության մասին, դուրս է բերում այն անհայտությունից եւ շարունակաբար հրատարակում «Եջմիաժին» ամսագրի 1977 թ. 7 եւ 8-րդ համարներում (սրա համար պետք է երախտագրտություն լինեց նրան): Աշխատանքը վերնագրված է «Խաչքարեր (կազմավորման եւ զարգացման համառոտ ակնարկ)». խաչքարերին նվիրված առաջին հիմնավոր ու ամենաբավական ուսումնասիրությունն է սա՝ այն էլ անմիջապես հեղինակի նկարներով ու չափագրություններով:

1952 թ. Իսրայելյանը Լեմինգրադում՝ ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի՝ Բ. Բեպկինի անվան գեղանկարչության, քանդակագործության եւ ճարտարապետության ինստիտուտում (ուր ուսանել էր), պաշտպանում է ատենախոսություն՝ սեփական աշխատանքների վերաբերյալ՝ «Իմ աշխատանքները ճարտարապետության մեջ» վերնագրով. եւ ստանում ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան. մեքեն, որ այս աշխատությունը պաշտպանելուց հետո հեղինակն ստեղծել է բազում գործեր, որոնց, բնականաբար, տեղ չեն գտել բնագրության մեջ:

Եվ շատ բնական է, որ Իսրայելյանը պիտի կարեւորեր մեր ճարտարապետության ուսումնասիրությունը եւ իր «Ճարտարապետական ժառանգության օգտագործումը» հոդվածում («Սովետական գրականություն եւ արվեստ», 1954, թիվ 1) գրեր այսպիսի տողեր. «Ճարտարապետական ազգային ժառանգության յուրացումը, մանավանդ երիտասարդ, սակավափորձ ճարտարապետի մոտ, հաճախ ընթացում է այս կամ այն հնարանքի ու դետալի մեխանիկական փոխառման ուղիով, ըստ որում առաջին իսկ հայացքից աչքի է ընկնում այդ հնարանքների եռյակը, նրանց նպատակի, ինչպես նաեւ առանձին դետալի նշանակության բացատրության անկարողությունը: Այս հանգամանքը մեկ անգամ եւս ապացուցում է անցյալի ժառանգության խոր, մանրակրկիտ ուսումնասիրման, ամեն մի կառույց, ամեն մի կոթող պատմական ասպակտով, ժողովրդի պատմության, նրա կուլտուրայի ընդհանուր պատմության ոլորտում դիտելու կարեւորությունը» (հոդվածը «Ճարտարապետության ազգային ձեռք մասին» վերնագրով գտնվել է նաեւ «Ռաֆայել Իսրայելյան. հոդվածներ, ուսումնասիրություններ, ակնարկներ» գրքում, Երևան, 1982):

Հայ ճարտարապետության գիտակ եւ հետազոտող Իսրայելյանի մասին Վարազդատ Յարությունյանն ասել է. «Մեր ստեղծագործող ճարտարապետներից ոչ ոք այնպես քաջատեղյակ չէր հայ ճարտարապետությանը, որքան Ռաֆին: Միութենական էր մեր շինարար ժողովրդի ամբիվ ու բազմապիսի հուշարձաններին: Առիթը բաց չէր թողնում մեկ անգամ եւս այցի գնալու, խորանկրկին լինելու նրանց հնային գաղտնիքներին: Նա կարող էր դառնալ խորաթափանց հետազոտող, հմտորեն մեկնաբանել հայ ճարտարապետության կոթողների լեզուն եւ, պետք է ասել, ամիսառջ չէին նրա փորձերը այդ ուղղությամբ, բայց նա նախընտրել էր այդ ամեն տեսնեղագործողի դիրքերից՝ նոր շունչ ու ոգի տալով ազգային ավանդույթներին: Պետք է հատկապես նշել, որ այստեղ նա պարզ փոխառության ճանապարհով չէր ընթանում: Նրա ստեղծագործությանը խորքի սպառնալույթներ կերպարներումը ազգային ավանդույթների հանդեպ, նա վճռականապես մերժում էր նոր ճարտարապետության ստեղծման տրոգրված եւ հեշտ ուղին:



Այս հարցի հետ կապված՝ մեքենները վարպետի մեկ այլ բարեկամի՝ Յուրի Յարալովի խոսքը. «Ռաֆին նուրբ ու լրջմիտ տեսաբան էր: Հուշարձաններ ուսումնասիրելիս նա ձգտում էր բաժանել իրն վարպետների ստեղծագործական իդեալների խորքը եւ կարողանում էր ոչ միայն այդ ամենի մասին պատմել պատկերավոր ու արտահայտիչ, այլեւ իմաստավորել ու ստուգել իր եզրահանգումներն իրականում այս կամ այն օբյեկտի վրա»:

Առհասարակ մեծ է Ռաֆայել Իսրայելյանի ավանդը հայկական հուշարձանների ուսումնասիրության ու պահպանության գործում: Նա հիմնադրեց գիտեր Հայաստանը, նրա ամեն մի անկյունը, սիրում եւ լավ ճանաչում էր մեր քաղերը:

Մնուշտ Իսրայելյանն ուներ իր ճարտարապետական ու քաղաքաշինական մոտեցումներն ու հայեցակետերը՝ առաջադիմորդ: Նա՝ իբրեւ հայ ճարտարապետության իսկական նվիրյալ, անտարբեր չէր նորակառույց ու նորաստեղծ ոչ մի շինության, ոչ մի փողոցի, նույնիսկ քաղաքային միջավայրում արձաններ տեղադրելու նկատմամբ: Ինչ խոսք, նրա աչքից չէր կարող լիքվել Երեւանի ճարտարապետական ու քաղաքաշինական առանձնահատկությունների հետ կապված եւ ոչ մի հայոց, տարբեր ժամանակներում ճարտարապետը հանդես է եկել բազում հոդվածներով՝ երեւանի թե՛ քաղաքաշինական եւ թե՛ բնական լանդշաֆտի ու պատմական հուշարձանների պահպանության խնդիրների վերաբերյալ:

Շարունակելի

Հրաչյա ԲԱՆՈՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ)
Բանասիրական գիտ. թեկնածու

Արթուր Ադամովի «Պիեաներն» ու նրա քաղաքականությունը

Սկիզբը՝ էջ 4

Թատրոնն ինքնին պայմանականությունների աշխարհ է: Աբսուրդի գրականության ներկայացուցիչներն այդ պայմանականությունները ծայրահեղության հասցրին, որը թարգմանչից պահանջում է լեզվական ճորտարտայնչամիջոցների ոչ միայն կիրառման հստակություններ, այլև նոր միջոցների «հնարումներ», ունակությունը՝ թարգմանիկ լեզվով փոխանցելու բնագրում առկա մտքի կազմապարները, ասելիքի անհետնողական «թռչկոտումները», անընդհատ տեղի ունեցող լեզվական «մեղակացումները», Իոնեսկոյի բնութագրմամբ՝ «լեզվի ողորդության» կայացումները, հակադիր մտածումների միասնության ապահովումը եւ լեզվական անհրաժեշտ այլ հատկանիշներ, քանի որ այդ գրականության մեջ, առավել քան որևէ հերոս, որպես գլխավոր ազդակ՝ հանդես են գալիս լեզվական միջոցները. Ադամովի պիեսները լեզուն են նաեւ բառերի ու բառակապակցությունների անկապակցելիությամբ, որ տեղիք է տալիս մեկնաբանությունների ու ձեռնադրույթների տարբերություններ: Ընկալման ու արտահայտման տուրբուլտությունները շատ մեծ է այդ գործերում, եւ ասել, որ այդ ամենի մեջ չի խճճվել Սաթե հաշատրյանը, քիչ կլինի: Մի բարգմանություն, եւ կատարվել է սիրով ու բազմիցսությամբ, ներարկել կարելի է՝ նաեւ տրամաբան, մեքեն կասեինք նույնիսկ՝ հետադարձական աշխատանքով, քանի որ Ադամովի պիեսներում օգտագործված ռժապետներն ու եթատեսույթային շերտերը, իմաստային նրբորություններ ունեցող բառակապակցությունները, լեզվական այլաբանական արտահայտամիջոցները հեշտին մեկնաբանությունների ու թարգմանությունների չեն



ենթարկվում: Մեր ձեռքին առկա այս թարգմանությունն աչքի է ընկնում նաեւ հայերեն գրագետ շարադրանքով ու լեզվամտառողության դրսեւորումներով:

Գիրքն ունի նաեւ հազեցած առաջաբան, որը վկայությունն է այն բանի, որ Ա. Խաչատրյանն ըստ ամենայնի խորացել է Սադանկի կերտած բարդ աշխարհների մեջ, փառապական եւ գեղարվեստական լիարժեք բնութային ենթարկել հեղինակային կերպարակերտման ու դրամատուրգիական լուծումների ողջ գիմնացող, ճանաչել ու վերհանել արտուրի գրականության բնորոշ առանձնահատկությունները:

Թարգմանչուհու կատարած աշխատանքի

հաջողվածությանը ըստ ամենայնի նպաստել են նաեւ մի շարք այլ գործոններ: Նա 2006-ին, որպես իրավաբան բեմադրիչ, գործուղվել է Յալթա, 2008-ին մեկնել է Փարիզ եւ ուսման Փարիզի դրամատիկ արվեստների ազգային բարձրագույն կոնսերվատորիայում, այնուհետև՝ Սորբոնի համալսարանում, որտեղ պաշտպանել է «Ամբատման դրաման ժամանակակից եվրոպական դրամատուրգիայում» թեման: ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 2016-ին Ֆրանսիայի Լիոն-2 համալսարանում շարունակել ուսումը՝ իբրեւ դոկտորանտ: Ֆրանսերենից թարգմանել է ժան-Լյուկ Լազարիի «Ես տանն էի եւ սպա-

սում էի անձրեկի գայլուն» պիեսը (2015), իսկ լեզուբն՝ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության աջակցությամբ՝ Յամսինա Ռեզայի «Պիեաները», Ֆրանսիայի տարբեր քաղաքներում (Ֆրանսերենում) բեմադրել է Ղուլի. Թումանյանի «Շեքիթները» եւ մեր ազգային էպոսը: Եվրոպական բեմադրիչների հետ համագործակցած կամ միայնակ՝ բեմադրություններ է կատարել Փարիզում, Լիոնում, Մարսելում, Ալիմոնում, ինչպես նաեւ Ֆրանսիայի հայկական կրթական օջախներում:

Սիա հայ եւ եվրոպական գրականության այս քաջատեղյակությունն էլ, ինչպես նաեւ դրամատուրգիայի տեսական եւ գործնական ոլորտների ինտեգրությունը օգնել են Ս. Խաչատրյանին՝ ապահովելու Ա. Ադամովի պիեսների թարգմանության բարձր որակը:

Երբ ձեռքը եւ ամուն մեծածավալ այս գիրքը, այն թվում է բավականին բթեւ, սակայն իր խորքի մեջ այն ծանր է եւ ունի մշակութաբանական ու ճանաչողական մեծ արժեք: Այս գրքի լույսընծայումը կարեւորվում է նաեւ մի այլ ելակետից: Այն ինչպես դրամատուրգիական նյութի, այնպես էլ դրսեւորման ու ձեռնորարարությամբ է լեզուն եւ կարող է դասագրքային արժեք ունենալ թատերագիտական հաստատությունների համար:

Մնում է հուսալ, որ Ադամովի դրամատուրգի «Հայրենադարձությունը» ամբողջական կլինի. Սաթե հաշատրյանը կբարձրանի Ադամովի մյուս գործերը եւս, եւ լուրջուհու հետնորդ Ադամովի իր բուն անուն-ազգանունով՝ Հարություն Ադամյան, լիարժեքորեն կկերպարանա իր նախնիների ծննդավայր՝ մայր Հայաստան:

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՎԵՅԼԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԼԵՐԵՂՐ

Սկիզբը՝ էջ 5
Ամսագրում հրատարակվել են արժեքավոր ու կարետոր հոդվածներ, որոնք անդրադառնում են հայ ժողովրդի պատմության տարբեր շրջաններին, հայ իրն և նոր գրականությանը, արվեստին, հայ բանահյուսությանը ու ազգագրությանը, լեզվաբանությանը, հայկական գաղութայիններին, հայ և հայերեն ժողովուրդների հարաբերություններին:

1888 թ. «Արարատ» ամսագրում բացվել է «Սուրբ Էջմիածնի գրադարան» խորագրով բաժին. սույն բաժնում գետնվել են Հայ եկեղեցու պատմության արձագանքներ, Բանաստեղծության և արվեստի մասին հոդվածներ, որոնք խորհրդների վրա լույս սփռող ձեռագիր բնագրեր:

1894-ի դեկտեմբերից մինչև 1899 թվական ամսագրի կրոնագիտական բաժնի խմբագիրն է եղել Կարապետ վրդ. Տեր-Սկրտչյանը. այս ժամանակահատվածում «Արարատը» բերուն շրջան է արժանանում աշխատակցող միաբանների ու մտավորականների ջանքերով 1913 թ. հրատարակվել է «Շողակաթ» հայագիտական ժողովածուի առաջին համարը՝ նվիրված հայ գրի ստեղծման 1500 ե. հայ տպագրության 400-ամյա հոբելյաններին:

Լինելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական ամսագիրը՝ «Արարատը» անուրաքանչեպ դերակատարում է ունեցել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանանքի, դավանաբանական դիրքորոշման պաշտպանության և անրագրման գործում: «Արարատ» ամսագիրը հրատարակման առաջին իսկ օրից եղել է հայ դավանաբանական մտքի համընդուն, Հայ եկեղեցու ուղղափառության

պաշտպանության հարթակը: Ամենեւին էլ պատահական չէ, որ ամսագրի առաջին բաժինը Կրոնականն էր. այս մասին «Արարատի» առաջին համարում հստակ նշվում է. «Արարատայ առաջին մասն Կրոնական դնելով՝ մտքերնիս այն չէ, որ հաւատոյ խնդիրներու վրայ պիտի խօսինք ու հաւատոյ վեճեր նորոգենք, այլ ինչպէս գրել ենք մեր յայտարարութեան մէջ, որ արդէն հրատարակուած է, եկեղեցական կարգաց են արարողութեանց յունմէ է երբ սկզբնաւորելուն վրայ պիտի գրենք...» (1888, է. (թիվ 1), էջ 2): Այսինքն՝ այս բաժնում ներկայացվել են Հայ եկեղեցու կարգն ու կանոնը, առաքելահաստատ լինելը, առաքելական հաջորդականությունը, մեր եկեղեցու նվիրակետության հաստատման պատմությունը, դավանաբանական դիրքորոշումը, ծիսակաշառմունքային համակարգը, նոր ուսումնասիրությունների լույսի ներքո և աղբյուրագիտական հիմնավորումներով են պարզաբանվել Հայ եկեղեցու պատմության որոշ չեղանգրաված հարցեր: Այս առումով «Արարատ» ամսագրի ստեղծագործական ընթացքը բաժանվել է երկու փուլի՝ 1888-1895 թթ. և 1895-1919 թթ. («Մատենագիտություն «Արարատ» ամսագրի», կազմ.՝ Սեդա Կոծիմյան, խմբ.՝ Սուրեն Քոլբասջյան, Աթոռն Հատիտյան, Ս. Էջմիածին, 1970):

Նկատելի է, որ առաջին շրջանում հրատարակված հոդվածները եւ ուսումնասիրություններն առավելապես կրել են պահպանողական-պատմական, մատենագրական-ջատագրական, քան գիտական բնույթ: Այս շրջանում աստվածաբանական և դավանաբանական հոդվածներն ունեցել են մատենագրական, ջատագրական և նկարագրի: Օրինակ՝ ամսագրի 1888 թվականի Ը (թիվ 4) համարում տպագրվել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելահաստատ լինելը, առաքելական հաջորդականությունը ներկայացնող հոդված՝ «Ամենհոգիա շարունակություն. Առաքելական յաջորդութեան Ուղղափառ Ս. Եկեղեցու Հայաստանայց» (էջ 39):

Իրողություն է, որ 1895-ից «Արարատ»

ամսագրում սկսել են գերակշռել հայ դավանաբանական մտքի ուսումնասիրմանը նվիրված գիտական հոդվածները՝ շնորհիվ Մայր Աթոռի միաբան-աստվածաբանների նոր սերունդի ծավալած գիտական լուրջ գործունեության: Հինգ այս շրջանում եկրոնային նշանավոր բուհերում կրթություն ստացած երիտասարդ հայ հոգեւորականները (Կարապետ վրդ. Տեր-Սկրտչյան, Գալուստ Տեր-Սկրտչյան, երվանդ Տեր-Սիմա-սյան, Գարեգին վրդ. Յովսէփյան և այլք) համախմբվել են Մադաքիա արք. Օրմա-Մյանի շուրջ:

Ամսագրում հրատարակվել են ծիսագիտությունը, տոմարագիտությանը, հայ եկեղեցական իրավունքին, կանոնագիտությանը վերաբերող կարետոր ուսումնասիրություններ: «Արարատի» միջոցով գիտության մեջ շրջանառվել են հայ դավանաբանական գրականության մաս կազմող արժեքավոր բնագրեր, աստվածաբանական երկեր: Կարետոր տեղեկություններ են հաղորդել հայ վանական համալիրներին, տարբեր եկեղեցիներին, վարչագրությանը, հայ եկեղեցական մշակույթին նվիրված հոդվածները:

«Արարատ» հանդեսում տեղ են գտել նաեւ ընդհանուր աստվածաբանությանը վերաբերող նյութեր, հրատարակվել են տարբեր կապերով աստվածաբանների ու եկեղեցագետների աշխատություններից թարգմանական հատվածներ: Այսպես՝ 1910 թ. համարներում տպագրվել են ռուս նշանավոր աստվածաբան, պրոֆ. Ն. Սապադրյայի «Հին եկեղեցական աստվածաբանությունը յոյն արեւելքում» երկից հատվածները (թարգմ.՝ Արտակ վարդապետ): 1917 թ. համարներում հատվածաբար լույս է տեսել ռուս գիտնական Ֆ. Ռոսելյինի «Փոսի ջանքերը՝ Հայ եկեղեցին միացնելու Կ. Պոլսի»


սյու կամ յունական եկեղեցուն» աշխատությունը: «Արարատ» ամսագիրը վիթխարի ավանդ ունի նաեւ հայագիտության զարգացման գործում: 1870-ի վերջերից ընդարձակվել է ամսագրի հայագիտական բաժինը:

Իրավամբ, կարող ենք նշել, որ ամսագիրն իր տարածմամբ ու եղիմականների լայն շրջանակի ընդգրկմամբ ստացել է համահայկական բնույթ: Հայ անվանի գիտնականների որոշ աշխատություններն առաջին անգամ լույս են տեսել «Արարատ» ամսագրի էջերում: Բացվել են հայագիտության նեթաբաժիններ՝ հայ երաժշտության, խաղաղության, շարականների (աշխատակցել են Կոմիտասը, Ս. Ամատունին, Ս. Մեկիթյանը), հայ իրավաբանական մտքի, գյուղատնտեսության և այլն: «Արարատ» ամսագրում հրատարակված հայագիտական, պատմաբանասիրական բնույթի արժեքավոր, հարուստ նյութեր բովանդակող ուսումնասիրություններն անդրադարձել են նաեւ ձեռագրագիտության, հնագրության, մանրանկարչության մյուս երկրներ: Հայ եւ օտարերկրյա որոշ մատենագիրների աշխատությունները հրատարակվել են գիտական համեմատական բնագրով:

Ամսագրի վերջին երկու տարիներին՝ 1918-1919 թթ. համարներն ամբողջովին նվիրվել են հայագիտական նյութերին: «Արարատ» ամսագրի դերը Հայ եկեղեցու մատենագրության եւ պատմության մեջ իրապես էլ առանձնահատուկ ու եզակի է. այն հրատարակվել է գրեթե կես դար եւ հայ իրականության մեջ եղել է բովանդակային առումով ամենահարուստ, գիտական տեսանկյունից ամենաարակալ ամսագրերից մեկը:

Արիմեն ՉԱՆԹԱՅԱՆ

ԲԱՒԱՍՏԵՆԾ ՏԵՐՅԱՆԸ



Սկիզբը՝ էջ 6
Անհատական բնույթի նորաբանությունների ոճական գործածության գնահատման իրենական չափանիշն այն է, թե դրանք ինչ ունենան և նշանակություն ունեն գեղարվեստական խոսքի դրական հատկությունների պահպանման գործում: Ինչպես արդեն նշվեց, Տերյանի խոսքարվեստում նորաբանությունները նպաստում են բանաստեղծական խոսքի սեղմությանը, բազմազանությունն ու թարմությունը, բացի նշված հատկանիշներից՝ նաեւ համագործակցում ու բարեհնչությանը: Դիտարկենք օրինակ.

Կանչում են ինձ ծայեր,
Չայերն արձանուշ,
Պարզվում են ինձ ձեռներ,
Չեռներ ծունաբնուշ...
(Անտիպ էջեր, II, 85)

Մեջբերված բանաստեղծական հատվածում հանգավորումն ստեղծվում է նորաբանությունների զուգակցմամբ, իսկ հնչյունական կրկնության եղանակները նպաստում են հնչյունական արտահայտչականության աստվածացմանը: Տերյանը ոչ միայն ստեղծել է նոր բառեր, այլեւ իր չափածոյում իմաստային այլ նորերն առնելով հաճախ գործածել է նաեւ այլ հեղինակների ստեղծած բառերը: Որոշ ուսումնասիրողներ իրավացիորեն նկատում են, որ անհատական նորաբանությունները «յուրաքանչյուր անգամ ոչ թե վերաբարձրվում են, այլ վերստին ստեղծվում» (Մ. Գոլոբ, *Стилистика современного русского поэтика*, М., 1986, էջ 167): Միայն օրինակներ՝

Ոսկեղուհի, ճ, հրաբեւ, այնպես բոսոր
Փայլում են դու...
(Անտիպ էջեր, II, 37)

Հմնմ.,
Կարոտ է հոգիս, թռչում է հրաբեւ
Այս մենաստանի բարձր պարպից...
(Հ. Թումանյան, *Երկերի ժողովածու 2 հատորով*, հ. 2, է., 1958, էջ 26)

«Հրաբեւ» բառի թունամանական գործածությունը մեջ ընդգծվում է «արագություն» իմաստը, իսկ տերյանական գործածությանը հեղանքը՝ պաշտնի էակի «աստվածային լինելու» զաղափարը: Կամ՝ «տրամաշուշ» բա-

ռը Ռ. Իշխանյանի դատում է Տերյանի ստեղծած նորաբանությունների շարքին՝ նշելով, որ այն բնորոշ չէ նախատերյանական բանաստեղծությանը, նույնիսկ Հ. Գոլոբյանի-Կյանի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի՝ նախքան 1908 թվականը հրատարակված ստեղծագործություններին (Ռ. Իշխանյան, *Տերյանի լեզվական արվեստը (դասախոսություն)*, մաս Ա, է., 1972, էջ 26): Նշված բառը Ա. Մելքոնյանը իրավացիորեն համարում է թունամանական նորաբանություն, քանի որ «տրամաշուշ» բառն ավելի վաղ գործածված ենք տեսնում «Փարվանա» լեզնդում (Ս. Մելքոնյան, *Հովի. Թունամանյանը և արեւելահայ գեղարվեստական գրական լեզուն*, է., 1986, էջ 248):

Տերյանի ստեղծած նորաբանությունների հիմքում սովորական երեսույթի բանաստեղծական ընկալումն է: Նույնիսկ լեզվում արդեն առկա բառերի նոր ու ինքնատիպ կիրառություններով Տերյանը կերտել է նոր բառիմաստներ, բառերի փոխաբերական գործածությունների շնորհիվ ոճական նոր արժեքով օժտել լեզվում արդեն առկա բառերը: Միայն օրինակներ՝ «...Բո ժպիտը թունոտ ծաղկանց բույրի մման, // Որ տիրաբար արեւեցնելով մահ է բերում...» (Սքնշաղի անուրներ, I, 85), «Դու գալիս ես մութ գիշերապահին // Եվ լինում ես լուռ...» (Գիշեր եւ հուշեր, I, 142): Բառարաններում «տիրաբար» բառի «տիրոջը հատուկ», «խկապես», «խիշառաբար» իմաստներին Տերյանը հավելում է մի նոր ու ինքնատիպ իմաստ՝ «հմայելով, գերելով, անառարկելի հմայելով», իսկ «գիշերապահ» բառի «գիշերը պահպանողական անող» իմաստին՝ «գիշեր ժամանակ» իմաստները:

Հեղինակային նորաբանությունները ոչ միայն տերյանական խոսքը ոճավորող կարետարակ ունենում են, այլեւ դրանք մեծ նշանակություն ունենում են հայոց լեզվի բառապաշարում:

որ: Բարձր համախալականություն ունեցող տերյանական նորաբանությունների մեծ մասը, նոր ու թարմ կապակցություններով հանդես գալով, ընդլայնում է իր գործածության ոլորտը՝ ավելի մեծացնելով հետագայում նորաբանություններով կիրառվելու հնարավորությունները: Տեղին է ինչել տերյանագետ Վ. Պարտիզոնու խոսքերը. «Բարձր ճանաչելու, զգալու, ապրելու, նրա անմեղատարբեր ճառաբանությունները տեսնելու, նրա մեջ բաբլված հնչեղանքները որսալու եւ անմախքաբար համարողությամբ ու լիարժեք հնչեղությամբ օգտագործելու, բարձր երիտասարդացնելու խոշորագույն վարպետ է Տերյանը» (Վ. Պարտիզոնու, *Վահան Տերյան*, է., 1968, էջ 539-540):

Մերի ՀՈՎԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբոլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

kristhayas.wordpress.com

Ստոր. տպագր. 14.12.2018 թ.

Տպաբանակ՝ 1175